



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՑ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 51—52

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՂԱՆԳՁԷՐԻ ՆՈՒԷՐՆԵՐ Հայ քահանայներուն
ՕՐՈՒՄՆ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԹՈՒ. — Ս. Ստեփաննոս
ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ. — Դիտողութիւն մը
ԱՌ. Ս. ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. — Հնչեակ
ՀԻՆ ԷՋԵՐ. — Ներսէս Շնորհալի՝ առ Դասս քահանայից
1911 ՏԱՐԻՆ, Եկեղեցական տեսակէտով
Նոր տարին և իր նշանակութիւնները
Նոր Տարին
1912ի պատմական նշանակութիւնը
Հայ-հռոմէական գործեր
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր
ԽՄՐ. ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Բացառիկ նուէրներ
մեր քաժանորդներուն

ՆԵՐՍԷՍ Ե. ՊԻՍԿ. ՍՍԱԿԱՆ
Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ
ՀՆԱՄՈՒԽ
Ո. Կ.
ԹԻՂԻ. ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԿՐՏԵԱՆ
ԽՈՐԷՆ ՔԶ. ԳԱԼԵՕՆՃԵԱՆ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՑ
ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ
ԱԲԵՂԱՑ
ԽՄԲ.
ԽՄԲ.

«ՏԱՃԱՐ»ի թէ՛ լիարժեք և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քահանայ Կեօղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց Եկեղեցի
بشيكطاش ازمنی کلیسا سنده «داجار» غزتمی مدیری پاپاس زارماير افندی
Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գանդը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ’ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏԶԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ գաւառաց’ տարեկան	40 դրու
Արսասահմանի հաւար	» 10 ֆրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ «ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍՍՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
րիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պողար-
եան
ԱՏԱԲԱԶԱՐ. — Տ. Սերոբէ Բհնյ. Պուր-
մայեան
ԱՏԱՆԱ. — Տ. Կարապետ քչյ. Երե-
ւանեան
ԱՖԻՍՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնկեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանտսեան էֆ.
ԲԱՂԷՇ. — Առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ.
Գալէմեան
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՅՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բհնյ. Արամեան
ԶՄԻՒՆԻՒԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիւն Բհնյ. Այլսեան
ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մուրատեան
ՄԵՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Տ. Յարութիւն Բհնյ. Աստարազ-
եան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ծ. Վ. Գապարեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԷՔԵՍԻՐ. — Տ. Կուսի Բհ.
Ֆիրդաթեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմբիւքճեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Դէորդ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԵՔԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմնեսիոս Բհնյ. Տրեզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.
Սամուէլեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վահան-
պետ Բհնյ. Քիւպրեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պապ Վրդ.
ՖՐԷԶՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԲԱԹԵՐԹ

ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԲ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 51—52

ԿԱՂԱՆԴՉԵՔԻ ՆՈՒԵՐՆԵՐ

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒՆ

«Կրօնաւորութիւն սուրբ և անա-
բատ առ ի յԱստուծոյ և ի հօրէ այս
է. սպցելու լինել որբոց և այրեաց
խնեղութեան իւրեանց»:

(Յակ. Ա. 27)

Ո՛վ քահանայ եղբայրներ, մեր յա-
ւատանք Հայ ժողովուրդին ո՛վ մխիթա-
րութեան մարմնաանոց հրեշտակներ, ես
ձեզի կաղանդչէքի նուէր տամ պիտի,
նուէրներ պէսպէս ու արցունքովս օծուն,
կաղանդչէքներ սիրուն ու գեղեցիկ՝ ցեղիս
կարմիր արւնտովը երանգուած: Դուք, գի-
տիմ, տարբեր կաղանդչէք մը չէք սպասեր
այն ձեր տարաբաղդ ժողովուրդէն, զոր
երկինք վաղուց է զրկեր կեանքի բոլոր
ուրախութեան ու երջանկութեան կաղանդ-
չէքներէն, ու ձգեր է անոր լացող այրիներ,
անտիրական սրբուկներ, քանդուած ու
մատաղ օջախներ:

Ո՛վ պատուական եղբայրներ, ա՛հ, որ-
քան մեծ է ու ծանր՝ հոգեւորականներուս
պարաքն ու պաշտօնը, ու միւս կողմանէ
որքան վսեմ ու սրբազան՝ մեր կոչումը:
Նոր տարին ու նոր օրեր՝ նոր փոփոխու-

թիւն մը, նոր խաղաղութիւն մը չբերին
մեր վշտաշարժար ժողովուրդին, ոչ կեանքի
ապահովութիւն, և ոչ պատիւի վստահու-
թիւն. արհաւիրքի ու մահուան գերանդին
է որ կը ճօճայ Հայութեան գլխին վրայ:
Հին տարին ձգեց մեզի մեր հին ցաւերուն
ու աւերներուն մէջ. բայց եթէ ունինք
մխիթարութեան բան մը, այն ալ մեր ապ-
րելու համար ունեցած հաւատքն է, մեր
ցեղին անընկճելի ոգին: Բռնութեան անի-
ծապարտ բիրտ ձեռքն ու արիւնոտ ճի-
ւանը՝ թէեւ քանդեց կործանեց մեր եկե-
ղեցիներն ու սրբավայրերը, բայց անի
չիրցաւ ու չպիտի ալ կրնայ քանդել ու
կործանել Հայութեան հաւատքին ու յոյ-
սին չէնքը ամրակուռ. «Թուեցան յաչս
մարդկան թէ մեռան, բայց յոյս նոցա լի
է անմահութեամբ»: Հայուն յոյսն ու հա-
ւատք տեւական է կեանքին պէս, հզօր է
մահուան պէս: «Յամենայնի վշտացեալք
բայց ոչ նեղեալք, յամենայնի կարօտեալք
բայց ոչ նուազեալք, յամենայնի հալած-
եալք բայց ոչ անկեալք»:

Մեր բոլոր այն սրբավայրեր, որ այրե-
ցան մոխիր դարձան իրենց ծոցը ապաստա-
նած անմեղ ողջակէզներով, ու զանոնք
ձենձերով դժոխային կրակին բոցը՝ մինչեւ
երկինք հասաւ Աստուծոյ փէշը բռնկեցուց,

երկնայիններու երեսը կարմրացուց և երկրի ծիրանաւորներուն թագակիր ճակտին քը-
սեց ու դրոշմեց ամօթի ու անարդարու-
թեան սե մուրը անջնջելի, բայց չկրցաւ
մեր Հայ ցեղը կեանքէ, հաւատքէ ու
ապրելէ դադրեցնել ու կասեցնել: Ու
դուք, ո՛վ քահանայ եղբայրներ, որ այս-
պիսի ժողովուրդի մը առանին հովիւն էք,
ու ոչ միայն Աստուծոյ նիւթական սեղա-
նին պաշտօնեաները, փոյթ չէ՝ քանի մը
չարական պակաս երգեցէք, տարին քանի
մը պատարագ զանց ըրէք, գնացէ՛ք, գնա-
ցէ՛ք այցելել այն աւերուն անակները, ուր
անկուր վիշտերով տուայտող աւերուն սիրտ-
սեղաններ կան խորտակուած, կեանքի
կենդանի տաճարներ՝ փլած ու քանդուած:
Քահանայ եղբայր. ներս մտիք անկէ, ուր
երբեմն չէնչող ու ճօխ կեանքը կ'ապրէր
ժողովուրդդ և ուր այժմ անոր որբերն ու
այրին իրենց ալի՜ աղի՜ արցունքները կուլ
կուտան: Անոնց համար չէ Նոր Տարին,
երկինքն իսկ փլած է անոնց վրայ. սրտի
ու կեանքի բոյնը քրքրուած ու քանդուած,
սեւ սուգի մռայլն է պատեր անոնց հոգին,
թախթներու մէջ է թաթխուեր անոնց
ամբողջ էութիւնը. գնա՛, փութա՛ միւի-
թարութեան ցողերը սրսկելու անոր սրտին
այրած ու մրկած, զի «կրօնաւորութիւն
սուրբ ու անարատ սա ի յԱստուծոյ և
ի հօրէ այս է, այցելու լինել որոց և այ-
րեաց ի նեղութեան խրեանց»: Կրօնաւո-
րութիւնը սուրբ է ու անարատ՝ ոչ միայն
անունով ու աստիճանով, այլև քանիւ և
զործով, սրտով ու զգացումով: Նոր տա-
րի ու տօնական օրերու մի՛ սպասէք, քա-
հանայ եղբայրներ, սուրն-օրհնէքի խունկ
ու նշխար մի առնէք, Աւետարանն ու
Խաչն առէք, փութացէ՛ք ձեր նահատակ
ժողովուրդին վերջին մնացորդներուն,
կեանքի վերջին խրեանքներուն, որոնց հա-
մար ոչ Նոր Տարին ու տօները հրապոյր
մը ունին, և ոչ ալ կեանքին օրերը ցնծումի
ու խնդութեան պահեր: Սփոթէ, Տէր Հայր,
որստանդէ, յուսադրէ զանոնք, մէկ ձեռ-
քովդ երկինքը ցոյց տուր, ուսկից կը ցօ-
ղեն կը կաթկթեն միայն ճշմարիտ ու իրա-
կան միւիթարութեան ցողերն անուշակ՝

վշտակ:ժ ու բեկուած սրտերու վրայ, ուր
կայ աչք մը անխուփ ու ամենատես որ
երկնից թռչունները կը կերակրէ, դաշտե-
րու շուշաններու կեանք ու գոյն կուտայ,
ու միւս ձեռքովդ ցոյց տուր սա անշահ
աշխարհը, ուր անոնք ապրելու պէտք ու-
նին ու որքան ալ արժանի Սչխմտու-
թեան միջ զանոնք, ու սորվեցուր անոնց
թէ աշխատին իսկ աղօթք մըն է:

«Միւիթարեցէ՛ք, միւիթարեցէ՛ք զժողո-
վուրդ իմ, միւիթարեցէ՛ք զԷս, զի ի եղեւ-
տառապանօք»: Քահանայ եղբայրներ,
Հայու տունը ցաւի ու լացքի տուն դար-
ձաւ, Հայու կեանք՝ տառապանքով լեց-
ուեցաւ: Դուք միւիթարեցէ՛ք անմիւիթար-
ները, սրտով բեկուածները: Պաշտպանե-
ցէ՛ք իրր հայր զսրովագութ ձեր ժողո-
վուրդին այրները, պաշտպանեցէ՛ք զա-
նոնք ամէն փորձութեանց ու անկումե-
րու հանդէպ. աշխարհս չա՛ր է ու վատ,
Հայուն պատերը բարձր ու մաքուր պա-
հեցէք: Դուք, սէր, կարեկցութիւն ցոյց
տուէ՛ք անոնց, որոնց ամուսինները ողջ
եղած ատեն որչափ ելեւմուտ կ'ընէինք
իրենց տուները, ուր սեղանին ճօխ էր,
սրտերնին զուարթ և ուրախ. ա՛հ, այժմ
թափուր է անոնց սեղան, և չորաբեկ հա-
ցի կարօտ են մնացեր: Մի՛, մի՛ թերա-
նաք ու թուլանաք ձեր հայրական պաշ-
տօնին մէջ, ու եթէ մոռնաք այդ գլբ-
բաղդները, անոնց նահատակ ամուսիննե-
րուն արիւնը պիտի բողբոջէ ոչ միայն զի-
րենք սպաննողներուն դէմ, այլև ձեր խղ-
ճին ու Աստուծոյ արդար ատեանին առ-
ջեւ: Գիտեմ, դուք վարձկան հովիւներ
չէք, որ «ժողովուրդին բուրդը կը խու-
ղեն, կաթը կը կթեն, բայց չեն արածեր»:
Դուք մեռելաթաղներ ալ չէք միայն, զի
մեր ամբողջ Հայ ժողովուրդը արդէն ինք-
նին կենդանի մեռել է դարձեր, ու մինք
ոչ թէ անոր սե յուղարկաւորներն ենք,
այլ հոգի ու կեանք ներշնչող հոգեւորա-
կաններ. դուք սորվեցուցէ՛ք անոնց դառն
արցունքներու մէջ «յուսով խնդալ»,
սաղնապներու մէջ «նեղութեան համբե-
րել»: Չէ՛ք յիշեր, ո՛վ քահանայ եղբայր-
ներ, այն ահաւոր ու դարհուրելի զուլումին

օրերը, ուր մեր Հայ Յեղը հուրով ու սուրով փորձուեցաւ, բայց անոր հաւատքն ու անընկճելի ոգին չմոխրացաւ, չփճացաւ, այլ ալ աւելի պայծառ, ալ աւելի արի կանգնեցաւ, ծառացաւ բարեկրօնեան հնոցներու մէջէն, արիւնի ճապաղիքներու ծոցէն: Չէ՞ք յիշեր այն քսանմասարսուռ ժամն ու վայրկեանը դժոխքներ, երբ ձեր հօտէն ողջ մնացածներ, ցիր ու ցան եղած պատառոզ երկոտանի գայլերու արիւնստ ձեռքերէն խոյս տալով, սպաստաներ էին մեր հայ եկեղեցիներու ծոց, ու ետին կրակը, այն լափլիզող հրեղէն վիշապը մէկ կողմէն, մոկեզին խուժանին սուրն ու գընտակը միւս կողմէն, մահ ու ոչնչացում կը սպառնային անոնց: Ահ, անսնք սակայն նոյնիսկ առ մահահոտ վայրկեաններուն չմոռցան իրենց քրիստոնէական հաւատքին պարտքը կատարել, խորայնացի երեք գերի մանուկներու պէս իրենց արցունքոտ աչքերը երկինք սեւեռած՝ բարի Աստուծոյ հրեշտակներու օգնութեան կը սպասէին, մինչ ահ, աս երկնային հոգիները անդին Սիսուանիս արիւնոտ դաշտերէն վիրաւոր հոգիները Ամենակալին մատուցանելու գործով էին զբաղուած, ու ասդին առ եղկելիները կ'աղաչէին, կ'աղերսէին ձեզի. «Տէր Հայր, Տէր Հայր, ահ վերջին արձակում մը տուր մեզի, Հաղորդութիւն հասցուր մեզի. ահա կ'այրինք. ահա պիտի մեռնինք. գոնէ պատուով ու հաւատքով մեռնինք»: Ինչ հաւատք ու համուզում է ասի, Տէր Հայր, մեր Հայ Յեղին, այնպիսի ահաւոր վայրկեանի մը մէջ, ուր բոցն իր պատանքը պիտի ըլլայ, մոխիրն իր հողակոյտը, անի սակայն հոգիացած է, մերկացի է մարմինը, չի մոռնար իր հաւատքի պարտքը, իր պապենական Աստուծոյ, նոյնիսկ եթէ Ան մոռցած ու լքած ըլլայ զինքը...:

Ա՛յ պատուական քահանայ եղբայրներ, չէ՞ք յիշեր այս ամենը, դուք որ անոնց հետը տառապեցաք, անոնց արցունքներուն խառնեցիք ձեր հոգեմարմունջ աղօթքի արցունքներն հեծեծագին: Դուք ականատես եղաք այս ահաւոր տեսարաններուն, ու թերեւս դեռ ձեր ականջին կը հնչեն

մայրակորոյս մանկիկներու ճիչն ու լացքի ձայնը, ձեր հօտին աղեկտուր վայնասունները որոնք խուժ խուժ ողջակիզուեցան մեր աշխարհի նոր ներուններու ձեռքերով: Ձեր կարգակիցներէն շատեր իրենց հօտին հետը սրախողխող նահատակուեցան, ու դեռ ահ տողանցումը կը կատարուի անոնց, ու տակաւին կարծես չլրացաւ երկնից մէջ հայ նահատակներուս դասակարգութեան տեղիքը: Գիտեմ, ձեր մարտիրոսացած դժբաղդ ժողովուրդին անյայտ հողակոյտները, անպատանք ու անթաղ մարմիններն իսկ չկրցաք օրհնել, չկրցաք սեւ խաչ մը դնել անոնց ջախջախուած ոսկորներուն վրայ, որոնք մեծ Խաչեալին խաչաչարչար զոհն եղան, փոյթ չէ, պատուական Հայրեր, դուք հոգեհանգիստ կատարեցէք այն բոլոր վիրաւոր հոգիներուն համար, որոնք այս անկրաւ աշխարհի վրայ հանգստի տեղ մը չունեցան: Նահատակաց մեղանուշ ու հոգեցունց շարականները երգեցէք Հայու կիսակործան տաճարներու խնկոտ կամարներուն տակ: Ու ամէն Մեռելոցի օրերուն օրհնեցէ՛ք, օրհնեցէ՛ք Սիսուանին սարերը, Ատանայի կարմիր դաշտերը, Հայաստանի մօտաւոր ու հեռավոր անկիւնները, ուր ինկան մեր սիրելիներ, կեր ըլլալով վայրի զազաններուն ու մոռնալը լեշներ անգըներուն: Օրհնեցէք Եփրատի, Սիսուանի ու Ճիհանի ափունքները՝ որոնց տիրաւորմունջ ալիքներուն տրուեցան անոնց կիսամեռ մարմինները: Միսթարեցէք, միսթարեցէք կենդանի նահատակներն ալ, որոնք հայ ցեղին սրբազան աւանդներն են. դուք անոնց Մովսէսները, Ահարոններն ու Յեսուսները եղէք, անցուցէք զանոնք արի ու անվեհեր սրտով տառապանքի կարմիր ծովերէն, սա զուլումի ու անարգար կեանքի կիզիչ անապատներէն ուր երկնային մանանայի փոխան սովի, սուրի պատուհասները կը տեղան: Մի՛ յուսահատիք, ցոյց տուէք Հայուն իր Գողգոթայի կեանքի բարձունքէն՝ խաղաղութեան Աւետեաց Երկրին ափունքը, ուղղեցէք անոնց կթոտ քայլերը՝ դէպի յոյսի, դէպի աշխատանքի, կեանքի պայքարին ասպարէզը:

Ո՛վ քահանայ եղբայրներ, ձեր ուսին վրայ առէք ու բարձր բռնեցէք Աւետարանն ու խաչը, ու ատ նոր տապանակ ուխտին մէջ դնել մի՛ մոռնաք ձեր հատակ ժողովուրդին փշուած նշխարներէն ու ոսկորներէն մաս մըն ալ, նոր տապանակիս ներքին կողմը օծեցէք արցունքովը Հայոց այրիներուն ու սրբուկներուն, իսկ արտաքին կողմը ոսկեղօծեցէք հայ նահատակներուն արիւնովը կարմիր: Յառաջ քալեցէք, մի՛ վհատիք, մի՛ յուսահատիք, սիրտ առէք ձեր ժողովուրդին, Քրիստոսի ատ փոքրիկ Հօտին, որ դարերու ընթացքին մէջ փառքն ու պարծանքն է եղած Անոր հիմնած Եկեղեցիին: Ու մի՛ մոռնաք այդ նուիրական տապանակ ուխտին ճակատը դրօշմուռ մէկ բառ մը միայն, Ա՛ր-ԴԱՐՈՒԹԻՒՆԷ՛, որուն առջեւ պիտի իյնան Նրիքովի բռնութեան պարխապները, պիտի քանդուին, պիտի փշուին ստույծեան, անիրաւութեան ու չարութեան պատնէշները փրքուն ու փշոտ:

Յիշեցէք, քահանայ եղբայրներ, Հայ ցեղիս Յովսէփ կաթողիկոսները, Ղեւոնդ Ներէցները, Ներսէսները, Սահակ Զորափորեցիները, Վարդուրականի Արծիւը, Հայոց վշտակիր Հայրիկը, որոնք իսէր և ի փրկութիւն այս բազմաչարչար Հայ ժողովուրդին՝ տքնեցան, տառապեցան, դրեցին, լացին ու աղօթեցին այս անիրաւ ու անարդար աշխարհին վրայ, ու դեռ կ'աղօթեն երկնից բարձունքէն Մեծ ԱՐԴԱՐԻՆ արիւնին առջեւ: Ահ, Տէր Հայրներ, Նոր Տարին է եկեր, մեր հին ցաւերուն վրայ բարդելու համար նոր ու պէս պէս ցաւեր ու դարձեր. դուք գնացէ՛ք այցելել երկրի բարիքներէն ու երկնքի կաղանդէքներէն զրկուած Հայ սրբուկներու, ձեր հարուստ ծովսերէն առէք ինչ որ կրնաք, ու տարէք հասուցէք ծովը մարած ձեր այրի քոյրերուն ու անհայր մանկիկներուն. մի՛ վախնաք, դուք անբաժին ու անօթի չէք մնար. Հայ ժողովուրդը իր աղնիւ ու անձնուէր հոգի կրող հոգեւորականները ոչ մերկ և ոչ ալ անօթի կը թողու. ան պիտի յարգէ, պիտի սիրէ ձեզի, ու ոչ միայն ձեր օծուած

աջը, այլ նոյն իսկ ձեր փիղոնն ալ պիտի համբուրէ. հերիք է որ դուք անոր տակ կրէք մաքուր հոգի մը, ու անձնագոհ զգացումներով զեղուն սիրտ մը որ մի միայն ժողովուրդին սիրովը կը բաբախէ:

ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ՍՍԱԿԱՆ

Ս. Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս

(ԱԽԳ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ)

«Տէր, մի՛ կամարիր դոցա՛ զայս մեղս»:

Դադարաբար վեհ արտասն է ան, կրօնքի չողափայլ արշալոյսովը ճառագայթուած առաքինութեան պսակը, որ լուսափողփող խէտի մը գեղանկար երանգներովը պըճնուած, երեւան կուգայ խիզախելու խռմբ մը Հրեաներու դէմ, որոնք գժուճ ստորնութիւնը յանձն առած էին լռեցնելու ճշմարտութիւնը ներդաշնակող Հոգի մը, արդարութիւնը խմատասիրող Միտք մը, գեղեցկին ու վնեմին ձգտող Սիրտ մը, բարւոյն ու առաքինութեան առաջնորդող Զայն մը:

Ինչքան պերճ ու չքեղ էր այդ մեղանուշ ձայնը, որ կուգար աղղու շնչակերպով տաճարին հոյակապ կամարները թնդացնել, որուն յստակ ու կորովի արտաբերումները, վճիռ ու հնչուն բառերու ագուցումը՝ ճշմարտութեան ծառաւի բազմաթիւ միտքեր իրեն կը յանկուցանէին: Բայց անտարբեր կը մնար այդ խռմբը Հրեաներուն, որոնց միտքը արդէն մոլեռանդ նախանձէն այնքան չլի ու դաժան արհաւիրքով մը կուրացած է, որոնք չէին կրնար տեսնել ոսկեհար Արեւէն ցողացող այն ճառագայթարձակ լոյսը, որ թերեւս կրնար իրենց գեանաբարչ դիրքն ու դոյութիւնը թանձրանոծ մթութեան մը քառսին մէջ թաղել:

Ոճրագործ ձեռքեր՝ ամէնքն ալ, եղեռնագործութիւններու արիւնովը չաղափուած, որոնք չպիտի խղճահարէին անգամ մ'ալ արդար երիտասարդի մը անմեղ արիւնով սրբապղծել իրենց ձեռքերը, որով

պիտի կրնային այդ արիւնի վարդազոյն կայլակներով մարել իրենց հողւոյն խորը բոցավառող հրդեհը, որ տգիտութեան հորիզոնէն փայլատակող արհաւիրալից շանթին պէս պիտի զիականցնէր իրենց ինքնութիւնը՝ խալոյկին վրայ ճկնճերով զոհի մը վերջին բեկորին պէս:

Եւ իրենք արամադիր էին այդ անմեղ արիւնը թափելու, այդ կենդանի պատարագը մատուցանելու իրենց կիրքերու բազինին, ուրկէ լուրով անուշահոտ շունչը պիտի կրնար խնկաւէտիկ Գաղափարի և Գիտակցութեան լուսածիր հորիզոնը, լայն ստարածքի մը վրայ իրեն յանկուցանելով արդարութեան և ճշմարտութեան ծարաւի հոգիները:

Որքան հանդարտ խիղճով մը Հրէից Սենեարիոնը կը վաւերացնէր մահուան տիրապետուող պատկերիքը անմեղ կեանքի մը՝ որ գերագոյն համարձակութիւնը ունեցած էր Յիսուսի հոյակապ գերազանցութիւնը տարփողելու, անոր Աստուածային ստեղծագործութիւնները փառաւորելու, անոր կենսաւէտող սքանչելիքներուն վրայասանութիւնը հիւսելու այն խժարը ամբոխին առջեւ՝ որ իր ամբողջ գոեհիլութիւններով, բոլոր տափակութիւններով անկուսափելի սովորութիւնն ունէր իբրեւ երկնային պատգամ ընդունել Սենեարիոնի հակասական վճիռները, սարտամ ու տնորոշ հրամաններն ու հակամարդկային որոշումները:

Եւ ահա այս Սենեարիոն ըստած գերագոյն ասեանին առջեւ համարձակութիւնը ունեցած էր Ստեփաննոս իր բողոքի ձայնը բարձրացնել՝ զայրոյթի նսպաներուն մէջ գալարուն, վրէժինդրութեան սրակուցիչ շեշտերով բոցավառ, ուր ջլապինդ բարկութիւնը իր սարսուցենոյ գոնգիւններով հոգեւարքի մը վերջին հորնդիւններուն պէս կը խոյանար, կը ծառանար դէպի ոճրագործներու, դէպի անիրաւներու ճակարկ, որոնք գեւ կը յամռնէին մերժել հոյակապ ճշմարտութիւն մը զոր բիւրելի պէս վճիռ ձայնով մը հնչեցուցած էր իր դարաւոր ու անժրտակի արձագանգը:

Եւ հիմա զայն կը կրկնէր Ստեփաննոս:

«Զո՞ ոք ի մարգարէից ոչ հալածեցին հարքն ձեր, և սպանին զայնոսիկ որ յառաջագոյն պատմեցին վասն զալստեան Արդարոյն»:

Իսրայէլի ճակարկն նետուած անջնջելի արատ մըն էր այս, զոր անվեհեր քաջութեամբ դուրս կը ցայտեցնէր Ստեփաննոս, այնքան նկարագրել պատկերացումներով, որ մարդ կը սարսուար անոր թողած տրպաւորութիւններէն, թէ այդ ոճրագործներու նախահայրերն ալ չեն քաջուած իրենց եղեւնագործ ձեռքերը արդարներու տրիւնով սրբապղծելէ:

Բայց հրէական անապաշտ միաբն կուրծի էր ըմբռնել այդքան քառամեցուցիչ իրողութեան մը ճշմարտութիւնը, որ կուգար աղօտել ու աղարտել ցեղի մը դարաւոր բարեպաշտիկ համբաւը, ուր առաքիւնութիւնն ալ իր երեւութական լուսապատկերը դրոշմած էր այդ որոշուած ու ընտրուած ցեղին վրայ: Բայց ներքնապէս զեղծումներու, եղեւնական գարշելի աւարաքներու սովորական ամբողջութիւնը չէր ուշանար իր սխրագործութիւններով փճացնել ցեղի մը ինքնութիւնը՝ փոխադրելով կեղեւանքին տակ:

Եւ խուժողուժ ամբոխը հանդարտ սրբտով մը կը կատարէր իրեն յանձնուած եղեւնագործութեան նուիրական պաշտօնը, սրբագործելով Պաղեստինի հողը Ստեփաննոսի երակներէն դուրս ժայթքող արիւնի օծութիւններով, երբ տակաւին թաց էր Գաղատիայի հողը, Յիսուսի կողէն դուրս ցայտող վարդազոյն արիւնի կայլակներով:

Զոհուած պատարագը ճիշդ նմանութիւնը ունէր իր պաշտած կրօնքի հիմնադրին՝ Յիսուսի, և իր թափած արիւնի կաթիլները պիտի սողէին գիտակցութեան ու գաղափարի լայնածառայ ու համատարած ընդարձակութիւնը, ուր պիտի վերընձիւղէին նորաբողոք կեանքը՝ սխրայօժար ու որամադիր մարտիրոսութեան զանա բաժակը քամելու, ինչպէս կը քամէր Ստեփաննոս մինչեւ մրուրը:

Սովորաւոր նայն իսկ այնքան հեշտիւ չմտնեցաւ մահուան բաժակին, որ իր խնու-

տասիրական նրբին հայեացքներով շատ աւելի ուսումնասիրած էր բարւոյն ու ճշմարտին գաղափարը, որքան Ստեփաննոս, որուն անվեհեր համարձակութիւնն ու քաջութիւնը հիացում պիտի ներշնչէին իրեն հետեւող մարտիրոսներու երկարաձիգ խումբին:

Կեանք մըն էր որ կը դիմանար քուրերու կոյտի մը տակ, բայց ոչ Գաղափարը՝ որ անբռնարարելի կը մնար, և իր արժանէտ ճաճանչումներով կը ծրածանէր Պաղեստինէն ալ անդին նոր տարածութիւններ հրդեհելու, նոր կեանքեր լուսաւորելու փրկութեան ակնախտիւ շողերով, որոնք դարերու երկար շարքի մը մէջէն ակնապիշ կը սպասէին այդ թեւատարած համայնապարփակ Արշալոյսին:

Նիւթական գոյացութիւն մըն էր որ կ'աճիւնանար անէանքի հովերուն յանձնուած, բայց ո՛չ՝ կրօնքի ստեղծագործ ոյժը, որ աիրապետող հանգամանք մ'ուներ ու Միջերկրականի ալեծածան ափերէն անդին պիտի տանէր նոր քաղաքակրթութեան մը ոսկերիչ շառայները, իր ետին քաշելով գաղափարի մարդուն գիտակից ու բանաւոր միտքը, որ ծնունդ պիտի տար երկնազան սքանչելիքներու ու գուռազեղ հրաշակերտներու:

Սենեաթիոնը կրնար միաթարուիլ լոկ Ստեփաննոսի մը կեանքը փոխացնելով. կրնար հանդարտ ու անխռով երեւոյթ մը ստանալ իր զեղծումներուն դէմ բողոքող պերճաբարբառ ձայն մը լուծիան դատապարտելով. բայց Ստեփաննոսի տեղ գաղափարի բերաւոր դիւցազներ կրնային երեւան գալ, և Յիսուսի վարդապետած կրօնքին լուսաճաճանչ ջանքերը տանիլ դէպի միջին ու խաւարակուռ ոլորտներ, ուր պիտի լուսաւորէին նոր կեանքի այգն ողջունող Արուսեակի մը չքեղ փողփողումները:

Գաղափարներու իրերամարտ հակադրութիւնն էր այս, որ յաճախ կը ցցուէր մարդկային ընկերութեան առջեւ. յաւիտեանական պայքարը՝ զիրար արմկահարող գերագոյն ոյժերու, որոնց տիրապետութիւնը ամբողջ բանականութեան հետ շաղուած,

իր մէջ կը բովանդակէր երեքտրականութեան մը դրական ու բացասական հանգամանքները: Բարւոյն ու չարի պայքարն էր այս, լոյսի ու խաւարի անջնջիկ կռիւր, քաղաքակրթութեան ու ագիտութեան անվերջ պատերազմը, որոնց մէջ տեղ Յիսուսի բերած նոր կրօնքը, յաւիտեանական ճշմարտութիւնը անպարտելի ոյժով մը ամրապնդած էր բարւոյն ու վրեժի գաղափարը, քաղաքակրթութեան ու լուսաւորութեան կենսատու պահանջը, որոնք պիտի առաջնորդէին ամբողջ խումբը պիտակից մարդկութեան՝ դէպի ծաղկասփիւռ արահետներ, դէպի լուսաշող հորիզոններ, և վերջապէս դէպի խէչալ կեանքը:

Գողգոթայի առկիին վրայ քարձրացող վարդազոյն ներկուած խաչին յաղթանակը վերջ տուած էր այս առամին վերջին արարուածին, և Ստեփաննոս իր մեղոյն աչքերը յառած դէպի այդ լուսաճաճանչ խաչին, իր գաղափարական գերազանց խէչալը կը տեսնէր յաւէտ սիրուած ու պաշտուած: Եւ գուցէ հրեայ ամսիւր ծիծաղելի արգահատանքով մը ձաղրէր Ստեփաննոսի միամիտ սեւեռումները, տեսական վերացումները, հոգեզմայլ յափըչտակութիւնները: Սակայն նա չէր սխալած իր կորովի համոզումներուն, իր չքեղ յայտերուն, իր վարդազոյն հրազներուն մէջ մտամփոփ, որոնց մօտալուտ իրականացումը հրապարակ էր զինքը:

Կա՛յ արդեօք ասկէ աւելի պերճախօս ու ցայտուն օրինակ մը բոլոր Քրիստոնեաներուն համար, որոնք ներքին անդիմադրելի ոյժէ մը մղուած իրականացումը տեսնել կ'ուզեն իրենց բաղձանքներուն, պսակումը իրենց գեղեցիկ յայտերուն: Ստեփաննոսի կեանքը է՛ն խօսուն ու է՛ն թելադրիչ կեանքն է, որ կրնայ գերագոյն խէչալը ըլլալ վեհին ու վսեմին, բարւոյն ու գեղեցկին ձգտող բոլոր հոգիներուն:

Չպիտի կրնանք գտնել ասկէ աւելի մեծ դո՛հ մը Յիսուսի բերած կրօնքին նուիրուած, որուն անհամեմատ արժէքն ու բարձրութիւնն է որ կը գնահատուի տենդաւառ անձնութիւններով, ու յաղթական

պայքարներով: Այդ կրօնքը միայն կրնայ ներշնչել մարդուն կենսամտորոգ այժմ մը՝ իր բոլոր յուսախաբութիւններուն ու տառապանքի վայրկեաններուն մէջ, հոգեշունչ մխիթարութիւն մը իր շլացող սրտաբեկումներուն ու լքումներուն մէջ: Այս երեւոյթներուն իրականացումը ճշդուած ու փորձուած իրողութիւն մըն է քրիստոնէական կրօնքի ընդհանուր պատմութեան մէջ:

Որո՞նք իրաւունք ունին արդեօք խոչալ կեանքը ապրելու. անոնք որ անկեղծ ու կոտորվի դադափարի մը նուիրուած՝ ճշմարտութեան լոյսը սփռել կ'ուզեն մարդկութիւնը բովանդակող ախուր զանգիւղին վրայ, թէ ոչ անոնք որ կ'ուզեն երկիւղի ու արհաւիրքի մթութեան մէջ խարխալիլ, իրենց արարքները թագուն պահելու համար:

Որո՞նք իրաւունք ունին արդեօք անմահութեան շքեղ պսակով պճնելու իրենց ձիւնափառ ճակատը. անոնք որ հոյակապ դադափարին կը զոհուին նորածագ արշալոյսի մը օծութիւններով արփաւետելու մարդկային ընկերութիւնը, թէ ոչ անոնք որ կեղտի ու կեղծիքի չպարնէրով ջնարակուած, սկեպտիկութեան ժահրով թուրաւորուած, կը ջանան միշտ իրենց հետեւողներուն շարքերը ստուարացնել և զանոնք առաջնորդել դէպի կորստեան անդունդը:

Ամէն անոնք որ արժանիքն ու քաջութիւնը ունեցած են դադափարի մարդը լուրջ իրենց հետեւող սերնդեան մթութեան մէջէն առաջնորդող բեւեռային աստղին պէս, ամէն կերպով իրաւունք ունին մեր անկեղծ հիացումն ու երախտագիտութիւնը յաւիտեան պէս գրաւելու դէպի իրենց պերճախօս գործունէութիւնը, դէպի իրենց անմուռնալի յիշատակը, որոնք դարերու մէջէն շարունակ պիտի խօսին ապրող ու գործող մարդկութեան:

Ինչքան արդար գնահատուածով մը Հայ եկեղեցին զիտցած է պատուել Ստեփանոսի կեանքին գեղեցիկ դրուագները, փառաւորել անոր չքնաղ յիշատակը. որ ինքնին շքեղ փթթում մ'եղած է նորածնի

քրիստոնէութեան համառարած բուրաստանին մէջ, որուն երակներէն հասող արիւնի բոսոր կայրակները վարդագոյն ներկած են ամբողջ մարտիրոսներու ծաղկափթիթ Հայը:

Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Յարգելի խնայարարքիւն «Տաճար»ի

Պատուական կրօնաթերթիւ էջերուն մէջ Գեր. Տ. Գնէլ Ծ. Վ. Գոյեմքեարեան սկսած է առ շարք մը յօդուածներու՝ հետաքրքրական խորագիրներով՝ Սիւնեաց դպրոցի և անոր ներկայացուցիչներու վրայ:

Վերջին 48րդ թիւը կը բերէր յօդուած մը «Վերթանէս Քերթով»ի վրայ:

Յաւով պիտի ըսեմ որ Գեր. Յօգուածագիրը՝ հակառակ իր եռանդուն ջանասիրութեան, անժանօթ մնացած է վերջին տարիներու մէջ Զ. և Է. դարերու վրայ լոյս տեսած քննութիւններու, որով թող տուած է իրեն՝ կամ կրկնել անփութօս ա՛յն ինչ որ անճիշդ էր և հնացեալ, և կամ թափառիլ արդէն հետազօտուած և ճշգրտուած խնդիրներու շուրջը: Հայ մատենագրութիւնը քննութեան կարօտ չա՛ն խնդիրներ ունի: Այս թիւը նուազեցնելու նուիրուած անձինք, որոնց թուին մէջ նկատուելու է առանց տարակուսի նաեւ Գեր. Յօգուածագիրը, պէտք են անպատճառ ձեռն ի ձեռն ընթանալ, գործել մէկ գիտակցութեամբ, խնայելու համար ժամանակ, արդիւնալից ընծայելու համար վաստակը, որ հնարաւոր է միայն առ այս յատկացուած ուսումնասիրութիւններն և ուսումնասիրութեան աչաց սուջա ունենալով:

Այսպէս, վերջին տարիներու մէջ առիթ եղած էր ընդարձակ յօդուածներ նուիրել Հանդես Ամսօրեայի մէջ «Պետրոս Սիւնեաց Եպիսկոպոսի» (Հ. Ա. 1903, էջ 245-252, 1904, էջ 18, 77, 105), և «Վերթանէս Վարդապետ Քերթովի վրայ» (Հ. Ա. 1910, էջ 8-11, 37-46, շարունակելի) Հ. Ն. Ակինեանի կողմանէ, որոնք շատ բան

պարզած են Զ-է դարու թէ՛ հայ պատմութեան և թէ՛ հայ մատենագրութեան էջերէն. (աճ. և Հ. Ակինեանի՝ Կիւրիոն Կարողիկոս Վրաց, Պատմութիւն Հայ-փրական յարաբերութեանց է. զարու մէջ. Վիեննա, 1910, արտատպուած «Հանգէս»էն:)

Այդ տեղ ընդարձակօրէն նկատութեան առնուած էին այն ամէն խնդիրք, զորոնք Գրէլ Ծ. Վ. այժմ նիւթ ընտրած է իր հետազոտութեանց:

Ներուի մեզի քանի մը գիտողութիւն:

Իւր վերջին յօդուածին մէջ Գեր. Յօդուածագիրը խառնած է երկու անջատ անձնաւորութեանց կենսագրութիւնները իրարու հետ. այսինքն՝ Վրբանէս Սիւնեաց եպիսկոպոսի և Վրբանէս վարդապետ Քերդոյի կենսագրութիւնները: Երկու անձինքս թէ՛ և ապրած են նոյն դարու մէջ, բայց բոլորովին տարբեր գործունէութեամբ և աւելի վաղուէն՝ քան որ ներկայացուած է հոս:

Առաջինը ապրած է 562— + 584 թուականներու մէջ իբրեւ եպիսկոպոս Սիւնեաց (երկրորդ յաջորդն Պետրոս եպիսկոպոսի, + 558. Գիգանէն ետքը): Այս վրթանէսին ուղղուած է Յովհաննէս Կաթողիկոսի (+ 574) թուովը:

Մինչ երկրորդը՝ Վրթանէս Քերդոյ, գործած է 590—640ի մէջերը, իբրեւ վարդապետ, աւելի ընդարձակ տապարէզի մէջ՝ գործնական և գրական արդիւնքներով Դունոյ Կաթողիկոսարանը, ուր Մովսէս Կաթողիկոսի մահուընէն ետքը (+ 604) նաև տեղապահութիւն ըրաւ:

Վերջինէս ոչ միայն քանի մը թուով տնինք, զորոնք կը յիշէ Յօդուածագիրը, այլ և պատմական գրութեան, թարգմանութիւններ: Հարազատ է նաև Ընդդէմ Պատկերաստից գրութեան, գրուած 590—604ի մէջերը, ինչպէս զայս տպագրուող Հ. Ակինեան (Հանգէս, 1910, էջ 37 ևն):

Պիտի բաղձայինք, որ Գեր. վարդապետը աչքէ չհեռացնէր յիշեալ և այլ սոյնս յիշի ուսումնասիրութիւնները:

Գործենք ձեռն ի ձեռն տապարիզի մը մէջ, ուր արդէն սակաւաթիւ են անձնատուր մշակները: «Գործք բազումք են, և մշակք սակաւք»:

ՀՆԱՄՈՒՆ

(Հ. Հ. Փիլիսոս)

ԱՌ Ս. ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Հ Ն Ձ Ն Ա Կ

«Հրեշտակ ի մարդկոնէ, մատնաթելի քերովքէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրեւ «զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուեսկին բարձրութեան» Գր. Նարեկացի

Ո՛րչափ անցին, նոր քարիքներ աւելցուցիր հիմերուն, Ի՛նչպէս իմ հեղ գործիքս ու խօսք օրհնեցիր մօտն ու հեռուն.

Երկնից սուրբիւ և զըսարմնոց շուսքեւ ջոկ՝ համօրհն

Նոր դրասեակ մեղեդիներ քողից ձօնեմ հնչօրհն:

Քեւ, Տիրամայր, Ի՛նչպէս ի խնդրեւ ի սրտքիւնք փոխեցան,

Բանիցս ընդ փոյր վեւ փորձութիւնք անհետ եղան

Ժայռք յաւերջին գերդ վարդենի, անսպասել իսկ ծաղիկցաւ,

Հիւսնեմար ժպտոյ շրթանց հանդիպեցան վիշտ և ցաւ:

Նոր ամ մի եւս ահա փութաւ յանձնել հըզօր ին Անուան,

Որոյ ի լուս սարսեալ եւ դիւք կորագրութիւն հեռանան...

Օրհնեալ Անուն, յորմէ ինք քրնաւ ճառագայթի տէր և յոյր:

Թո՛ղ այս լինի կեանքս քոյր սարկներէն աւելի Բեռն շնորհօք եւ հրաշխիք, ո՛վ գերասանց Մայր և Կոյս,

Զիւժդ մարտի յաւօր լինել յոյսն իմ զրթոյդ պաշտելի...:

1 Յունուար 1912 (Ը. Ե.)

Ռ. Ա.

ԿԱՐԵՒՈՐ

Մեր պատուարժան գործականներէն կը խնդրենք տարեգրութեան առաջ մաքրել իրենց հաշիւը, ի վիճակի դնելու համար զմեզ գործադրելու այն օգտակար առաջադրութիւնները զորս կը պարզենք քիչ մը անդին: Նոյնը կը խնդրենք ուղղակի բաժանորդագրուող այն անձներէն, որոնք տակաւին իրենց բաժնեգիրը չեն զրկած:

ՀԻՆ ԷԶԵՐ

Մեր խոստովմին համաձայն, սպօրութենէ կը սկը-
սինք հրատարակութիւնը մեր երանաշնորհ
նախնիքներէն ներսէս Շնորհալիի Բերկանու-
կանէն Առ Քահանայս ուղղած թուղթին, զոր
պարզաբանելով աշխարհաբարի վերածած է
մեր պատուական աշխատակիցը՝ Արթ. Տ.
Վարդան քհնյ. Աստուծոյ Բնութեանը Հայ-
քրիստոնեաներու և մասնաւորապէս Հայ-
քահանայներու համար ո՛րքան կարեւոր է
ծանօթանալ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
հեղինակուոր Հայրապետի մը այս հայրական
խրատներուն, որոնք, աւա՛ղ, թաղուած, տն-
մատաց գանձ մը մնացած են շատերու
համար։—

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԱՌ ԴԱՍՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Հիմայ խօսքերնիս դարձնենք և ուղղենք
քահանայական դասին, որ աստիճանով
երկրորդ էք եպիսկոպոսներու, և դրուած
էք Եկեղեցւոյն մէջ, որպէս զի թողոր մար-
դիկ Աստուծոյ նուիրէք կամ առաջնոր-
դէք, ծնիք զանոնք Ս. Աւագանին մկր-
տութիւնովը, երկնաւոր Հօր որդեգրու-
թեանը ու Քրիստոս Աստուծոյ ժառանգա-
կից ըլլալու, ու Տիրօջը մեղքեր քաւող
մարմինին ու արիւնին (կորհուրդին) բաշ-
խուծովը այդ ծնուածները կերակրել ու
անոնց հոգիները անմահութեան (վերսփո-
խել)։ Կ'աղաչեմ ամենքդ, ի սէր Քրիս-
տոսի որ զուք ձեր մտքին աչքերը բանաք
և արթննաք այս կեանքին մահուան տա-
նող թմրութենէն, և ճանչնաք թէ ի՛նչ
երկնային և զօրաւոր գործի է որ հրաւիր-
ուեր ու կանչուեր էք։ Ձեր պաշտօնը
պէտք է գիտնաք որ հրեշտակներու՝ գե-
րաշխարհի՛կ զօրութիւններուն՝ պաշտօնէն
չստ աւելի բարձր է, բայց եթէ դուք
ձեր աստիճանը արդարութեամբ և սրը-
բութեամբ գործադրէք։

Եւ որովհետեւ արժանի սեպուած էք
ձեր անձերը այդ երկնային գործին տալու,
չլլայ որ բանով մը արատաւորէք ձեր
պաշտօնը, ինչպէս որ Աւագեալը կը պատ-
ուիրէ ու կը խրատէ, (Պետրոս տառքեայի
Կաթողիկեայց թուղթը՝ Ա.—Ե. գլուխ 1

համար, հապա քաջութեամբ և յօժար սրը-
տով և առանց ծուլութեան Ս. Հայրապետնե-
րու սահմանած կանոնական աղօթքներն ու
ժամերգութիւնները անթերի կատարեցէ՛ք
ամէն մէկ ժամանակին։ Մաքուր հոգիով,
սուրբ սիրտով, անարատ հաւատքով, մեծ
յոյսով, պարզ մտքով, կատարեալ սիրով,
անով և դուրսութիւնով սպասաւոր եղի՛ք
Աստուածային Խորհրդոյն։ Չլլայ որ, ինչպէս
ջուրը խողովակէն կ'անցնի, առանց մատ-
ուութեան, անմտաբար (մեքենայի պէս)
աղօթքին խորհրդաւոր խօսքերը արտասա-
նէք, ըլլա՛յ սաղմոսերգութիւնները, ըլլա՛յ
ուրիշ Սուրբ Գիրքերէ ընթերցումները,
ըլլայ պաշտօնեղբարութիւնը, ըլլա՛յ քահանայի
յատուկ Ս. Պատարագի աղօթքները և կամ
ո՛ր և իցէ կարգադրուած կանոնները։ հապա
բոլորովին մատուցեալ, ուշադրու-
թեամբ կարդացէ՛ք, և եթէ կարելի է ու
կրնաք, խոր զգացումով, արցունքով ու
մեծ վախով ու սարսուռով տրտաանե-
ցէ՛ք, անանկ որ իբր թէ դուք էք որ նոր
ի նորոյ ձեր սրտին խորէն և մտքին մէջէն
կը բխէք այդ աղօթքները։ Վասն զի այդ ա-
մէն սահմանուած աղօթքները առ Աստուած
ինդրուածքներ են, որպէս զի պէս պէս
բարութիւններ և պարգևներ մեզի չնորձե-
տէրը։ Եւ նա ինքն՝ բարեաց պարգեա-
տուն, երբ տեսնէ խնդրալին ջերմուան-
դութիւնն և սրտագին հայցելը, խնդրու-
ածը առատօրէն կը չնորձէ, ըստ Աւետա-
րանի պատգամին թէ «(Ով որ կը խնդրէ
կ'առնէ)»։

Գիտցէք թէ առաջ, ոչոյնքն Աւագե-
լոց ժամանակը, մինչդեռ Քրիստոնէական
հաւատքի զարունը նոր կը ծաղկէր, ամեն
հաւատացեալներ լեցուած էին Ս. Հոգիով,
և Ս. Հոգիին չնորձովը իրենք իրենցմէ
կը խօսէին աղօթքները, պէտքին համա-
ձայն, Պատարագի Խորհուրդին և թէ՛ բո-
լոր միւս կատարուած արարողութիւններու
առթիւ։ Իսկ դարերու հոլովելովը քանի
որ նախնական այդ գեղեցիկ ժամանակներն
անցան, մեղքի ձմեռը առաջ քաղեց և
սառնամանիքը խոտապէս ցրտացուցին
լարքերը ու ամենուն մէջէն գլուխէ Աս-
տուծոյ հանդէպ սէրը նուազեցուցին, և

Ս. Հոգիին չնորհքը վայելելու մասին բուժեղան մարդիկ, Եկեղեցիին սուրբ և հոգեկիր վարդապետները հոգեկան ղգացումով տեսան և ըմբռնեցին բարքերու այդ յետադիմութիւնը, և գրեցին ու իրենց յաջորդողներուս գրաւոր աւանդեցին իրենց արտասանած ներշնչեալ աղօթքներն ու մաղթանքները, որպէս զի անոնցմով անսրխալ և անապթաք կերպով աւաջնորդուինք ու կատարենք Եկեղեցիին բոլոր կարգաւորութիւնները. ատոր համար պէտք է որ այս աղօթքները խօսինք ու կատարենք մեծ հաւատքով ու յոյսով:

Սա ալ ճանչցէք թէ ձեր քահանայութեան անունն ու կոչումը չէ թէ մարդոյմէ է, և ոչ ալ մարդկային կարգադրութեամբ, հապա Անկից (Գրիստոսէ) որ քահանայ անուանուեցաւ ըստ կարգին Մելքիսեդեկի (և ո՛չ թէ Ահարոնի), որ ինքն է ճշմարիտ քահանայ և քահանայապետ և պատարագ, առ Հայրն Աստուած ընծայուած: Անիկայ, այսինքն Գրիստոս Յիսուս է որ իր անունով ձեզի քահանայ անուանեց. և ինչպէս որ իր անունը ձեզի շնորհեց, անանկ ալ իր գործը ձեզի յայտնեց, այն է որ դուք հովուէք իր ժողովուրդը և միշտ բարի գործքեր ընել սորվեցնէք և (մանաւանդ) անձովնիդ բոլորին բարեգործութեան օրինակ տաք, ինչպէս որ Պողոս առաքեալ Տիմոթէոսին գրած իր հովուական թղթին Դ. գլուխին մէջ (14 համար) կը գրէր թէ «Զըլլայ որ անհոգ մնաք երէց ձեռնադրուած ատեննիդ ձեզի ոյրուած շնորհի մասին, հապա միշտ յիշէք»: Դարձեալ յիշեցէք թէ Պողոս կ'ըսէր. (Ա. թղթոյն Ե. գլ. 17 համար) «Այնպիսի քահանայները կրկին պատիւի արժանի են, որոնք կ'աշխատին խօսքով և վարդապետութեամբ»: Ուստի կ'աղաչենք որպէսզի ձեր անունին և կոչման համաձայն գործն ալ կատարէք, և ձեր ժողովուրդին իբրեւ հայրեր կամ ծնողներ ամեն ատեն հոգեւոր խըրատներ տաք, միշտ սորվեցնէք անոնց: Եկեղեցիներու մէջ կամ հրապարակներու մէջ և կամ տուններու մէջ, ամենքին ալ սորվեցնելու ջանադիր եղիք իրենց տարիքին կամ ըմբռնումին համեմատ զգու-

շացնելով (մոլութիւններէ), և յորդարեցէք զամենքը որ Աստուածային (պատուիրանները սիրեն ու գործեն):

Ու թէեւ ամեն տեսակ բարի և առաքինի գործերով ալ կատարեալ պէտք է ըլլաք, սակայն Եկեղեցիի պայծառութեան հոգ սարէք ու Ս. Պատարագին Խորհուրդին ժամանակ պատուական և մաքուր զգեստ հագնելու մի մունաք, հոգ տարէք. վասն զի կը լսեմ թէ տեղ տեղ հասարակայ հագած զգեստը հագնելով ու աղտոտ արեխները ոտքը, կան քահանայներ որոնք սուրբ բեմը կը բարձրանան, և ահաւոր Խորհուրդը անխորհրդական զգեստներովներ կը կատարեն, և իրենց ըրած այդ բանը համեմատութիւն կը սեպեն իրենց, նոյն միջոցին ժողովուրդը Եկեղեցիէն դուրս հանելով կը կանցնեն, դուռը գոցել կուտան, ու ատենցմէ զատ անմտօրէն կը բամբասեն ալ ուրիշ Եկեղեցիներու ու մեր սահմանած բարեգործ կարգաւորութիւնն ալ: Ուստի և ես կ'ըսեմ. չըլլայ որ ձեր մէջէն գտնուին քահանայներ որոնք անխորհուրդ կամ անպէտ բան մը սեպեն քահանայական զգեստները. վասնզի ինչպէս որ հին ատենը Մովսէսի սկսած տնտեսութեան ժամանակ նկարուեցաւ, նախ օրինակով (ստուերական ձեւով հաստատուեցաւ), ու նոր անտեսութեան մէջ Գրիստոսով լրումին հասաւ, անանկ ալ հինին քահանայները նոր քահանայութեան տիպն ու օրինակն էին, ու Ահարոնի հագած պատմուճանը նոր քահանայներուս զգեստներուն տիպն ու օրինակն էր: Սուրբ առաքեալները Հոգւոյն սրբայ գործակցութեամբ կատարելապէս յարդարեցին Եկեղեցիի ամեն կարգ ու սարքերը, և ուր որ քարոզեցին, ամէն տեղի մէջ քահանայներ և սարկաւագներ կը ձեռնադրէին և (յատուկէն) կը պատուիրէին որպէս զի անոնք ներքին և արտաքին մաքրութիւնով սղասաւորեն փրկական Խորհուրդին: Անկից սկսեալ բոլոր աշխարհի մէջ տարածուեցաւ Եկեղեցին, և ընդհանուր քրիստոնեայ ազգերու Եկեղեցիները զարդարուած ու պայծառ վիճակ մը ունին: Սրբութեան Խորանին սպասաւորութիւնը կը կատարեն

ամէն տեղ պայծառազգեստ վայելչութիւնով:

Բոլոր ուրիշ եկեղեցիներէ աւելի պայծառ ձեւով էին Հայաստանեայց աշխարհին և ազգերնու եկեղեցիները, սկսեալ Սուրբ Լուսաւորիչէն, մինչեւ որ հիմնադրուած և զաւ Հայաստանը իր քաղաքական գոյութեամբ: Բայց մեր սուրբ Նախնիքներուն հաստատած բարի աւանդութիւններուն ու մանց հակառակելուն պատճառն ինչ է, եթէ ոչ ազիտութիւնը և ինքզինքը միայն հաճեցնող կամապաշտութիւնը. այդ հակառակողները չտեսան մեր եկեղեցիին առջի ժամանակներու մէջ ունեցած պայծառութիւնը, երբ Աստուծոյ ողորմութիւնովը լեցուն էր Հայաստանը. հապա սա հալածանքի ակուր ժամանակներուն մէջ ծնած ըլլալով, տեսեր են մինակ խրթնատեսակ սպեղութիւննիս. վասնզի մեր ազգութիւնը ազգատութեան մէջ սառնապապին վիճակ ունի, և ո՞ր երկրի մէջ որ կը գտնուի, երկաթէ ստրկութեան լուծին ներքեւ ճնշուած կը մնայ: Հայը մարմինի հարկաւոր անհրաժեշտ պէտքերէն իսկ զուրկ է, ուստի և եկեղեցիի պայծառութեան վրայ ինսուր մտածէ, հոգեպէս չարժի, և բարիքին վրայ նախանձախնդիր ինսուր ըլլայ, երբ սէրը ցամքեր է, ըստ Փրկչական խօսքին: Եւ հիմակուան հալածանքի օրերը չեն նմանիր հին դարերու հալածանքի ժամանակին. մինչդեռ այն ստինը Քրիստոսի նոր հաւատացեալներուն մէջ այնքան զօրեղ էր Աստուծոյ սէրը, որ աւելի մեծ և աւելի պատկառելի ձեւով եկեղեցիներ շինուած կը տեսնենք քան թէ եկեղեցիին համեմատապէս խաղաղ միջոցներուն: Ուստի այդ ո՞ր գիտուններն են որ այս մութն ու անկարգութիւնը տեսնելով, որ առաջ եկած է ազգին ազգատութենէն ու երկրին աւերմունքէն, և սառնապանքնիս որ Աստուծոյ պատուհասէն են, աւանդութիւն և օրէնք կարծելով, կը յանդգնին դէմ դնել բարեգործութեան և ստատաւաւանդ հրամաններու:

Բայց մենք անիմաստ այդ հակառակողներուն վիճաբանութիւններուն դէմ խօսելու պարագան մէկդի ձգելով, անոնց որ

հնազանդ էք ու կը կենաք Աստուծոյ օրէնքին, ըստծներուս վրայ այս պատուէրն ալ կ'աւելցնենք այս բաներուն համար թէ՛ քահանաները Աստուծոյ և Թեզմէ հրաման չունին առանց սուրբ ծածկոյթ մը (չուրջառ) հազնելու Ս. Պատարագ մատուցանելու, կամ Աւետարան կարդալու, կամ ձեռքերնին խաչ առնելու, կամ եկեղեցիի ո՞ր և իցէ որբութիւններուն մօտենալու. և այս բաները որոնց մասին քիչ թէ չստ գրեցինք, և կամ ասոնց նման բաները որոնք մարդու արտաքին զղուշութեան համար (կարեւոր) են, Աստուածային խորհուրդներու կատարման համար պատրաստուող քահանային անհրաժեշտ են:

(Շարունակելի) Թարգմ. ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՐՄԱՆԵԱՆ

1911 ՏԱՐԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ

Տարի մըն ալ կը բոլորենք: Ամբողջ տարուան մը ընթացքին մէջ եկեղեցական ո՞ր և է ուշադրու երեւոյթ արձանագրելու բարեբախտութիւնը չունինք դժբախտաբար: Ամուշ չըջան մըն է որ կը բոլորենք մէկ խօսքով: Այս պարագան ո՞րքան անպատուարեր է ազգին համար, այնքան ևս աւելի անպատուարեր՝ Հայ եկեղեցականութեան համար: Պոյսոհայ եկեղեցականութեան ներկայ անկերպարան, անսիրտ, անսկալ վիճակը արտուր էջ մը կը կազմէ մեր եկեղց, կեանքին էջերուն մէջ: Սահմանադրութենէն առկին Պոյսահայ եկեղեցականութիւնը ընդհանրապէս իր գոյութիւնը ապացուցանող կարեւոր դործ մը չունեցաւ: Պոյսահայ քահանայութիւնը այս չըջանին ալ մնաց իր արգահատելի և տգէտ վիճակին մէջ, երբ նկատի չստնենք համրուած բացառութիւնները:

Կնիւն, պաակել, քաղել: Հայ քահանային համար այս երեք վերացական խորհուրդներէն դուրս զինքը հետաքրքրող ուրիշ ո՞ր և է բան մը գոյութիւն չունեցաւ: Քահանայական ասպարէզին նուիրականութիւնը երբէք չհետաքրքրեց զինքը, ան պահեց

վիճակ մը՝ որ ուրիշ բան մը չէր՝ բայց եթէ հասողեցում մը իր իբր վարձկանի սպասաւորութեան:

Հայ քահանան չհետեւեցաւ ժամանակիս գիտական և բարոյական պահանջումներուն: Հայ քահանան ցուցնելու և ճանչցնելու համար իր գոյութիւնը, պիտի թօթափէր այն նախապաշարումները, որոնցմով չաղախուած էր իր խելքն ու ուղեղը, և որոնցմով կ'օրօրէր իր ժողովուրդը, օգտուելու համար անոր միամրտութենէն: Հայ քահանան՝ ընտանիքի ամենէն մօտը տարող մարդ մը՝ իր վարքով, իր նկարագրով, իր զարգացումով չինող և բարերար դեր մը պիտի կատարէր եկեղեցիէն դուրս ընտանիքներու մէջ, համայնքին մէջ, իսկ եկեղեցիէն ներս իր պերճախօս քարոզութիւններով, իր զիւլիչ և հմայիչ խրատականներով պիտի սիրցնէր եկեղեցին և անոր սպասաւորողները:

Ժողովուրդը եկեղեցիէն պաղած է, ժողովուրդը եկեղեցի չի յաճախեր, կ'աղաղակեն, կ'ալմկեն քահանայ Հայրերը, և սակայն երբէք չեն փնտռեր ժողովուրդին եկեղեցւոյ հանդէպ ունեցած անտարբերութեան պատճառները:

Քահանայական ասպարէզին, քահանայական կոչման նուիրականութիւնը չեշտող և Հայ քահանային դիրքը բարձրացնելու մասին Տաճարի մէջ տեսնուած խմբագրականները յոյս կը ներշնչեն մեզի թէ Հայ քահանայութեան գիտակից մէկ մասը, հասկըցած է արդէն իր կոչման վտանգութիւնը, և հետևաբար կրնանք ենթադրել թէ Հայ քահանայութիւնը նոր քայլ մըն է որ կ'առնէ, և մաղթենք որ այս զարթնումը չմնայ այսօրուան սաղմնային վիճակին մէջ:

* * * Երջանկայիշատակ Տ. Մատթէոս Իգմիրեան կաթողիկոսի մահուամբ թափուր մնացած Հայրապետական Աթոռը վերջապէս ունեցաւ իր օրինաւոր յաջորդը: Կաթողիկոսական այս վերջին ընտրութեան ատեն, անգամ մըն ալ առիթը ունեցանք շատ մօտէն սերտելու ընդհ. Հայ եկեղեցականութիւնը: Հայ կղերը ինքն իր մէջ պառակտուած ըլլալու ապա-

ցոյցը տուաւ, և կղերին այս ոչ պատուաբեր ընթացքը շատ ընտանիք է որ ծանր աղբեց զինքը ընտրող և պահող ժողովուրդին վրայ: Աւելորդ է այս մասին ո'ր և է խորհրդածութիւն. քանի որ Տաճարի Պատ. խմբագրութիւնը պէտք եղածէն աւելին ըրաւ արդէն:

Հիմա պիտի սպասենք, տեսնելու համար թէ Տ. Կէորգ Ե. կաթողիկոս պիտի կրնայ վաղարշտպատի շուրջը տեղի ունեցած մեքենայութիւններու, դաւերու առաջին առնել և խաղաղութիւնը վերահաստատել վանքին մէջ, մասնաւորապէս որ նորընտիր Հայրապետը կերպով մը միաբանութիւնէն դուրս կը ձեւացնէր ինքզինքը, և ցաւ կը յայտնէր որ աստուայ մարդիկ վատարանում են Ս. Էջմիածնի սմբողջ միաբանութեան, մասնաւոր դէպքերն ընդհանրացնելով և մասնաւորների տարածը ընդհանրութեան վերադրելով»:

* * * Երուսաղէմի Պատրիարքութիւնը տակաւին անգլուխ կը մնայ. վանքին մէջ և վանքէն դուրս միաբանութիւնը պառակտուած վիճակ մը ունի. միաբանները բարուած են իրարու դէմ, և վանքը կուտակցական վէճերու, շահախնդրութիւններու, ամբարտաւանութիւններու թատերավայր մը եղած է: Այս բարոյական անկումը նիւթապէս ալ շատ ծանր աղբած է վանքին վրայ: Կեդրոնի կողմէ ձեռք առնուած միջոցներով ալ կարելի չեղաւ խողովեցնել վանքը, և չի գիտցուիր թէ ինչ կերպով կարելի պիտի ըլլայ կարգն ու կանոնը վերահաստատել վանքին մէջ: Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ Ս. ք. ուխտաւորութեան չըջնալէն վերջ, Պատրիարքական ընտրութեան ձեռնարկելը ծանուցանելով, Կեդրոնէն փութով պատուիրակի մը առաքումը խնդրած էր: Խնդրուած պատուիրակը գնաց, վերադարձաւ անկէ ի վեր ինը ամիսներ անցան և Տեղապահ Ս. ք. ընտրութիւնը կատարած, լնկուցած տեղապահի մը գոհ սպասուորութեամբ Ե. գիպտոս մեկնեցաւ իր պարտաւոր միաբն ու մարմինը հոն կաղըուրելու համար: Կեդրոնը անձայն մնաց այս իրողութեան հանդէպ, և պաշտօնական ուէ բացատրու-

թիւն չպահանջուեցաւ Տեղապահ Ս.էն : Կեդրոնի պատուիրակն ալ իր նստորդնութուն պէս պարզ ուխտաւորութիւն մը ընելով վերադարձաւ : Կիմա ի զուր կը սպասէր իր ուխտագնացութեան տպաւորութիւններուն : Արդեօք Շնորհաց 1912 տարւոյն Պէջ բարեբաղդութիւնը պիտի ունենա՞նք Երուսաղէմի առաքելական Աթոռին յաջորդը ողջունելու , արգեօք աչքերնիս բաց պիտի կրնա՞նք տեսնել խաղաղութիւնը վանքին մէջ : Յուսանք :

*** Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը , Թրքահայ տառապեալ ժողովուրդին միակ յենարանը , ներկայ տարեշրջանին մէջ չկրցաւ լիովին կոտորել իր պարտականութիւնը : Եւրջ տաան ամիսներ անկերպարան վիճակ մը ունեցաւ Պատրիարքարանը : Հանգուցեալ երկաթեայ Պատրիարքին աշուկերտը և անոր յաջորդը , Դուրեան Ս. , չկրցաւ որոշ և կարուկ վճիռով մը իր շուրջը յարուցուած յուզումներու , ալմուկներու , թեր ու զէմ գրուածքներու առաջին առնել . լուռ հանդիսատես մը եղաւ , տկարացաւ իր գործին մէջ և վերջապէս կուսակցական հովերը վրնքը տարին գրին անանկ կացութեան մը մէջ , սրուն անխուսափելի հետեւանքը եղաւ իր հրաժարումը : Մեղանչած կ'ըլլանք դատախազելով Նորին Սրբազնութեան Պատրիարքութիւնը , երբ լսենք թէ Դուրեան Ս. իր Պատրիարքութեան օրով չկրցաւ օգտակար հանգիստնալ , թէ չկրցաւ նշանակելի գործ մը կատարել : Ատոր յանցանքը ուղղակի զինքը ընտրողներուն , Ազգինն էր : Դուրեան Ս. Հայ եկեղեցականութեան մէջ եղական զէմք մըն է , անդուգական սուղնադ մը , և ունի շատ խոշոր արժանիքներ : Բայց դժբաղդաբար Ան պատրաստուած չէր վարչական գործերու համար , իբր վանահայր անմոռնալի և շատ գնահատելի ծառայութիւններ մատուց ազգին , քան իբր Պետաշնորդ . Տեղապահ և Պատրիարք :

Դուրեան Ս. ի հրաժարելէն ետք տեղապահական շրջանին ալ աչքառու բան մը չկրցինք տեսնել : Արդէն աստանկ բան մըն ալ չէր ուզատուեր Տ. Մանուկ Ս.էն ,

քանի որ իր եկեղեցականութեան չըջանին մէջ գրեթէ երբէք առիթը ունեցած չէր իր վարչական կարողութիւնները գործադրելու , ի յայտ բերելու : Մանուկ Ս.ն ալ հովերուն ուղղութեանը հետեւեցաւ , և ինչ որ ամենէն ցաւալին է , զանազան առիթներով քննադատուեցաւ թէ վրէժխնդիր ոգւով մը արտայայտուեցաւ անոնց դէմ , որոնք իրեն հակակրութեան ենթարկուած էին :

Հայրապետական ընտրութեան հետ Պատրիարքական ընտրութիւնն ալ կատարուեցաւ , և Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը ունեցաւ իր արժանաւոր յաջորդը՝ յանձին Տ. Արշարունի Ս. ի :

Ն. Սրբազնութիւնը իր տեղապահութեան ատեն ցոյց առաւ իր վարչական կարողութիւնները , և հետեւաբար կը յուսանք թէ իր Պատրիարքութեան օրով պիտի կրնայ օգտակար ըլլալ Ազգին և եկեղեցւոյն :

*** Մայր Աթոռէն , երուսաղէմէն և Պոլսոյ Պատրիարքութիւնէն ետք , ունինք նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը : Կիլիկիոյ , այդ գերազանցապէս սգաւոր երկիրը , շատ պէտք ունի բարոյական և նիւթական օժանդակութեան :

Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոսը կրցաւ օգտակար ըլլալ իր թշուառ ժողովուրդին , իր կարողութեան ներած չափովը սփոփելով անսահման թշուառութիւնը : Կիլիկիոյ աւերակները կանգնելու համար Նորին Ս. Օծութեան տարած աշխատութիւնները արդարեւ յոյժ գնահատելի են : Ան իբր ճշմարիտ հովիւ մը վազեց հոն ուր իրեն կը սպասէր պարտականութիւն մը : Գիւղերի , քաղաքները այցելեց , մխիթարեց իր Հօտը , մէկ խօսքով իբր քաջ հովիւ մը իր անձը դրաւ իր հօտին վրայ : Կիլիկիոյ այդ աւերակ քաղաքին մէջ անհրաժեշտ է Նորին Ս. Օծութեան ներկայութիւնը , սակայն առանց Կեդրոնի բարոյական և նիւթական օգնութեան , Տ. Սահակ Ս. Կաթողիկոս առանձին մտալով թերեւս վնասի և հրաժարի , հետեւաբար Կեդրոնի աւագ պարտականութիւններէն մէկն ալ պէտք է ըլլայ Կիլիկիան մշածելը , Կիլիկիան ջնոռնալը :

* * Տարւոյս ընթացքին մէջ ունեցանք քանի մը Համագումարներ՝ եկեղեց. երեսփոխաններու ընտրութեան և այլն առիթներով: Տեսանք դժբաղդաբար թէ Համագումարն ամէն բանէ առաջ ինքն իր մէջ անկեղծ չէր: Ինչպէս դիտել տուինք արդէն, այդ ժողովներուն մէջ ալ պակաս չեղան հենքիկները: Կղերներ՝ լարուած իրարու դէմ՝ իրար կը դատաւիտէին, կը վտրկարեկէին, նոյն իսկ առանց մեծամտահոլութեան որոշումներ կը քուէարկէին և կը վաւերացնէին: Որչափ կը յիշենք, եկեղեց. բարեկարգութեան խնդիր մըն ալ յառաջ քշուեցաւ, և բաւական բաներ մըն ալ պրտեցաւ այս մասին. սակայն Հայ եկեղեցականութիւնը իր անտարբերութիւնը անգամ մըն ալ ցուցուց, վիժեցնելով այս շատ կարեւոր հարցը: Զի գիտցուիր թէ թէ Իգմիրի Կրօն ժողովը ինչո՞ւ անժամանակ կը նկատէր եկեղեց. բարեկարգութեան հարցը՝ արդի պայմաններուն մէջ: Ընդհանրապէս Հայ եկեղեցականութիւնը պէտք է որ լրջօրէն նկատողութեան առնէ եկեղեց. բարեկարգութեան խնդիրը, եթէ կ'ուզէ որ յարգուի, սիրուի իր ժողովուրդէն:

* * Եկեղեց. գրականութեան գալով, արձանագրելիք շատ կարեւոր պարագայ մը չունինք դժբաղդաբար: Նախորդ Պատերիարք Օրմանեան Ս. յաջորդաբար հրատարակեց Եկեղեց. պատմութիւն մը և Համապատմութիւն մը: Այս երկու գործերն ալ ժամանակին ներկայացուած ըլլալով, աւելորդ կը համարինք խօսիլ անոնց մասին, երբ մանաւանդ հեղինակին ակնյայտնի կարողութիւնը ծանօթ է ամենուս:

Առոնցմէ զատ թարգմանաբար հրատարակուած են մէկ քանի եկեղեց. գրքոյկներ: Իսկ Հայ եկեղեցականութեան սիրուած գրիչները արդէն շարունակեցին իրենց աշխատութիւնները Տաճարին մէջ, որ Թրքահայոց միակ կրօնաթերթը ըլլալով, կրցաւ անխափան չարունակել սարի մըն ալ, ինչ որ պատիւ մըն է իր հմուտ խմբագրին:

* * Տարեկան այս համառօտ սեսուծութիւնը վերջացուցած ատեն, աւելորդ չենք համարիր քանի մը խօսք ալ մեր Հայ-

հռոմէական ազգակիցներու մասին: Հայհռոմէական կղերը ինքզինքը շատ հեռունըրը տարած, կը կարծէ թէ պիտի կրնայ կղերական տիրապետութիւն մը ստեղծել: Մեզի համար եթէ կայ զարմանալի պարագայ մը, ո՞ն ալ Հայհռոմէական կղերին յամառ ընդդիմութիւնն է. չենք գիտեր թէ այս յամառութիւնը յառաջ քշելու համար որո՞ւ կրթնած է Հայհռոմէական կղերը:

Թէրզեան պատրիարքի ընթացքը ընդհ. դժգոհութիւն մը յառաջ բերաւ Հայհռոմէական ժողովուրդին մէջ: Թէրզեան Ս. գինքը չըջապատող կղերին անսպով, իր ձեռքով պատրաստեց իր անկումը: Թէրզեան Ս. մոռցաւ, ուրացաւ ժողովուրդին իրեն հանդէպ ունեցած համակրութիւնը: Թէրզեան Ս. անտեսեց Հայ-Լուսաւորչականներուն կողմէ իրեն եղած յարգանքը, և քան զՊապն Պապ մը ձեւանալով, քիչ մնաց որ պիտի արգիլէր Հայհռոմէականներուն մեր եկեղեցիներուն առջեւէն իսկ անցնիլը: Սպասենք և տեսնենք թէ Հայհռոմէական կղերը ի՞նչ ընթացք պիտի բռնէ իր ժողովուրդին և իր պետին՝ Թէրզեան Ս. ի դէմ, որ այլեւ իսպառ կորսնցուցած է իր բրեւքիծը:

* * Հայ-բողոքական ազգակիցներ աւելի սերտ յարաբերութեան մէջ են մեզի հետ. սիրուած գրիչներ ամէն ժամանակէ աւելի կը մշակեն այս բարեկամութիւնը և Ազգին գլխուն եկած աղէտներուն համար մեզի հետ, մեզմէ աւելի կ'ողբան անոնք:

* * Հայ և Յոյն եկեղեցիներու յարաբերութեանց գալով, ըսենք անմիջապէս թէ տարւոյս ընթացքին մէջ քաղաքական դէպքերու բերմամբ երկու եկեղեցիներու Պետերը յաճախ այցելութիւններ փոխանակեցին: Այս այցելութիւններու ատեն, ինչպէս սովորութիւնն է, երկու եկեղեցիներու միութեան և գործակցութեան մասին ալ սիրալիւ խօսքեր փոխանակուեցան: Յոյն եկեղեցւոյ նշանաւոր դէմքերէն Գոլոնիոյ Մեղրապոլիտ Տ. Պողիկարպոս Հայ եկեղեցւոյ ուղղափառութիւնը հաստատող գրքոյկ մը հրատարակեց: Այս գրքոյկը, հակառակ իր համառօտութեան, շատ բան

կը պարունակէ իր մէջ: Գերայարգ մեղ-
րապոյիտը Հայ եկեղեցականի մը պէս կը
պաշտպանէ մեր Եկեղեցւոյ ուղղափառու-
թիւնը, և հակառակը պնդողներուն դէմ
կը յարձակի ջախջախիչ փաստերով:

Կը փափաքէինք որ Յոյն Եկեղեցւոյ
Ս. Հայրերը միեւնոյն ոգւով տողորուած
ըլլային հանդէպ Հայ Եկեղեցւոյ. վասն զի
ցաւ է ըսել թէ Տ. Պօղոկարպոսի այս
հրատարակութենէն քիչ ետքը, Յունաց
Պատրիարքարանի Սինօդը չարտօնեց որ
Յոյն քահանան կատարէ Հայ մեռեալի մը
թաղումը: Այս որոշումը որ օրը օրին ար-
ձագանգ գտաւ Հայ Մամուլին և մասնա-
ւորապէս Տաճարի մէջ, դժբախտաբար ի-
րողութիւն մըն էր:

Մեղի համար միշտ խաբուսիկ ձեւեր
պիտի մնան փոխանակուած այցելութիւն-
ներն և սիրալիր խօսակցութիւնները՝ եթէ
Յոյն կղերը չարունակէ իր նմանօրինակ
խտրական անդէպ արարքները:

ԹՐ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ

ԵՒ ԻՐ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բեղմնաւոր նոր տարի մը կը թեւակո-
խենք, Եկեղեցիին և Ազգին նորանոր յոյ-
գերովը ծանրաբեռնուած, և հաւատքի,
յոյսի և սիրոյ քաղցր ակնկալութիւններովը
երերուն:

Նոր տարի, նոր Հայրապետ, նոր
Պատրիարքներ և նոր Տաճար: Ազգին,
Եկեղեցիին և հանուր Հայուն ամենէն նուր-
բական գործին նուիրուած ազգականերու
չարք մը՝ որոնց գործունէութեանը և կամ
գործելակերպին լծորդուած է ամբողջ Ազգի
մը ճակատագիրը:

Նոր տարին. — Ժամանակը ընդ միշտ
բարի է ամէն անոնց համար՝ որ կ'ուզեն օգ-
տուիլ անոր ընթացքէն: Ո՛չ թէ տարիներ՝
այլ նոյն իսկ դարեր բարի են անոնց համար
որոնք բարութիւնը կը սիրեն, բարիք կը
սերմաննեն և անշուշտ նոյնը կը հնձեն:
Մարդոց գործելակերպէն կախում ունին
նաեւ դարերու տիտղոսները, — երկաթի

դար, ուսկի դար ևն. — որոնք, մարդեր
իրենց գործերով երկաթացուցած են և
կամ ոսկեզօծած: Թէեւ ըսուած է. «Քանզի
ժամանակը չար է», բայց մենք կը հասկը-
նանք «քանզի այդ ժամանակի մարդերը
չար են»: Ուրեմն կրնանք հետեցնել թէ
ժամանակին ճակատագիրն ալ իր մէջ գոր-
ծող մարդերէն կախում ունի. ան միշտ
բարի է և պիտի մնայ այնպէս՝ որքան
սաւնն որ մարդիկ ուզեն. ան բարի է միշտ
և հակառակը չար:

Աւետիս ձեզի, ուրեմն, բարիներ,
ահաւասարի գեղեցիկ և բարի տարի մը,
աշխատեցէք գործածել զայն և օժտել ձեր
բարեգործութիւններովը:

«Տաճար»ը. — Իր երրորդ շրջանին է որ
կը թեւակոխէ ի ծննդենէ սիրուած կիսամ-
սեայ Հանդէսը: Կրօնաւոր — եկեղեցական
սքեմի տակ պահ մը ծածկուած՝ ընթացաւ
հսկայաքայլ այլապէս նիւթերու վրայ ճա-
ռելով, և ժամանակի անհասկացողութեամբ
ամայնալու վտանգին տակ գտնուող աստ-
ուածային Տաճարը կենդանացնելու յոյսի-
րով գեղուն, Հայու հաւատքին վրայ հիմ-
նուած այդ հսկայ հաստատութենէն ուծա-
ցող ժողովուրդին քարոզելով թէ անոր և
իր մարտիրոս զաւակներու արիւնին կը
պարտի Հայը՝ իր գոյութիւնը, ի՞նչ այդ Ս.
չէնքին նուիրական հոգեբանութիւնը վեր-
լուծելով ըմբռնող մեր Նախնիքներու Զան-
քերուն կը պարտի իր կենդանութիւնը,
թէ յունական, պարսկական, բատինական
և այլ ուսնձգութիւններու առջև իրենց
կեանքը տալով պատուար կանգնողներու
չնորհիւ է որ այսօր Հայը Հայ կը կոչուի,
և ո՛չ թէ յոյն, պարսիկ ևն.:

Քարոզեց, բացատրեց ասոնց ամէնը,
և այդ ծանր բայց նուիրական բեռին տակ
չկքելէն զատ, իր վրայ առաւ նաեւ ազ-
գային և գիտական հարցեր ալ, միեւնոյն
ատեն իր կիսամսեայ հանդիսի հանգա-
մանքը չաթաթաթելի վերածելով, և
յառաջիկայ տարուան մէջ թուրքերէնի
բաժին մ'ալ աւելցնել որոշելով: Աս-
կէ վերջ էր որ «Տաճար» աւելի մեծ դեր
կատարել սկսաւ՝ չաթաթը անգամ մը երեւ-
նալով իր ընթերցողներուն և հրամցնելով

անոնց գեղեցիկ պէսպիսութիւններով դար-
դարուն գրութիւններ :

Արդեօք Հայը երկու տարուան շրջանին
մէջ կրցաւ օգտուիլ այս պատուական դա-
սագիրքէն : Էնթերցողը ինչ փնտուկ հոն
և չգտաւ : Վանինէ՛ր գիտութիւնը և
հաւատքը իրարու սխերիմ թշնամիներ կը
կարծէին : Տաճար շատ գեղեցիկ կերպով
կարողացաւ ցոյցնել թէ անոնք հաշտ են
իրարու հետ : Հաւատքի այդ կարծեցեալ
գայլը (գիտութիւնը) անոր գտնուելը կը
դառնայ, երբ մարդկային սխալ ըմբռնում-
ները կը սրարդնին մահաւանդ այնպիսի-
ներուն համար՝ որոնք միայն մեկան կը
կարդան, առանց թափանցելու իմաստին :

Տաճար իր սահմանին մէջ կարելին ըրաւ-
ժողովուրդին օգտակար ըլլալու : Սակայն,
անկեղծ ըլլալու համար, պէտք է խոստո-
վանիլ թէ Տաճար իր երկրորդ շրջանին
մէջ եթէ թերութիւն մը ունեցաւ, այն ալ
ամենէն աւելի յուզուած կենսական խն-
դրի մը՝ եկեղեցական բարեկարգութեան՝
վերջնական լուծումը տրուած ըլլալու աւե-
տիւր չկրնալ տալն է իր ընթերցողներուն :
Կը սիրենք յուսալ թէ այս նոր տարեշրջա-
նին՝ Տաճար դարձեալ պիտի արծարծէ այդ
խնդիրը և իր ձայնը անշուշտ նպաստաւոր
արձագանգ պիտի գտնէ սիրտերու մէջ :

Պէտք է որ Տաճար դարձեալ յուզէ այս
խնդիրը՝ եթէ կ'ուզէ նոյն ինքն իր նպա-
տակին ծառայել : Գիտակից ժողովուրդը
ա՛յլ չի կրնար գլուխ ծռել յունական,
լատինական և այլ աղբեցութիւններու
տակ որդեգրուած սովորամոլութեանց :
Եկեղեցին պէտք է ստանայ իր նախնի ա-
ռաքելական դիրքը, իր վաղեմի պարզ
օծարապը : Պէտք է իր հիմնադրին՝ Յիսուսի
խաբաղանով դուրս վտարէ ամէն անոնք
որ կ'ուզեն վրնքը աւազակներու այր դար-
ձնելու. «Տուն իմ տուն աղօթից կոչեացի» :
Այս գործը շատ դիւրաւ պիտի կրնայ ի
գլուխ եղնել հաստոտամիտ և բարի կամե-
ցողութիւնով : Նոր Կաթողիկոս և նոր Պատ-
րիարք, օգտուած արպար յատկութիւն-
ներով, և զինուած Ս. Ս. Էկտարանի
ճշմարտութիւններով, պիտի հաճին հեծա-
նոցը ձեռքերինն առնել՝ «սրբելու համար

զկալ» : Եկեղեցական և ազգային իշխա-
նութեան գաւազանովը մէկ հարուածով
անտարակոյս պիտի փշրուի այն թուփը որ
կը կենայ ընդ մէջ Ս. Եկեղեցիին և անոր
հաւատացեալ ժողովուրդին :

Իբրեւ նոր տարուայ նուէր՝ Տաճարէն
այս կը սպասենք :

Եղորիա ԽՈՐԷՆ ՔՅ. ԳԱԼԵՈՆՃԵԱՆ

Խմբագրութիւն «Տաճար»ի

Շնորհակալութիւն՝ Արթ. յօգուածագրին, իր
քաջալերիչ խօսքերուն համար : Տաճար կարելին
ըրած է օգտակար ըլլալու հայ ժողովուրդին.
բայց իր տնօրէն խմբագիրը ուրիշ ամէն մարդէ
աւելի կը զգայ թերթին թերինքը, զորոնք լեց-
նել՝ նիւթական լաւագոյն պայմաններու կը կա-
թօտի, և ապահով ենք թէ պիտի կրնանք զայդ
ձեռք բերել, շնորհիւ ժողովրդային այն տարա-
ծուն քաջալերութեան, որուն իրաւունք ունի այս
ձեռնարկը :

Գալով Եկեղ. բարեկարգութեան, տոտր կա-
րելորդութիւնը չի կրնար ուրացուիլ. բայց այն
տաղանթակի վիճակին մէջ ուր կը տուայտի հայ
ժողովուրդը՝ պայքարելով իր կեանքի, պատուի
և ինչքի ապահովութեան համար, դիւրահասկը-
նալի է որ մեր Հոգեւոր Պետերը կը հարկաւ
դրուին երկրորդական տեղ տալ այդ կարեւոր
խնդրոյն : Սպասելով սակայն տոտր իրադարձման,
հայ եկեղեցականութիւնը պարտաւոր է նախա-
ձեռնարկ ըլլալ ինքի՛նքի ռաբեկարգելու : Այս նիւ-
թին վրայ գրելքներ ունինք արդէն, իբրեւ շա-
րունակութիւն Հայ Բանաստեղծի վրայ մեր տոտու-
թեանց, զորս ակամայ ընդհատեցինք, օրուան
նիւթերու առատութեան պատճառով :

ԽՈՍՔԸ

Խօսքի ճշմարիտ գործածութիւնը ճշ-
մարտութեան ծառայեցնել է :


* * * Խօսքի առուտուրին մէջ սակիի և
արծաթի հատիկներ միայն գործածեցէ՛ք :

* * * Անխոհեմ խօսք՝ անարժէք նկա-
րագիր :

* * * Լուութիւնն անշուշտ առաքինու-
թիւն է, բայց վատութիւն է երբ պատիւը
կը պահանջէ խղել զայն :

* * * Խօսքը ականջներուն համար այն
բանն է, ինչ որ է լոյսը աչքերուն համար :

* * * Խօսքի որոշ չափով դիւրութիւն
ձեռք ձգելը պէտք է մուտ գտնէր անձ-
նակուն կրթութեան ամէն ծրագիրներուն
մէջ :



ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նոր տարիի սեմին վրայ, շատ թելադրիչ մտածութիւններու կը մղուին ամէն ունեւ, որ սովորութիւն ունին կեանքի ամէն պարագաներէն դասեր ու խրատներ հանել իրենց:

Կեանքի մէկ հանգրուանն է տարեմուտը, պայմանադրական, որոշ կէտ մը, ուր մարդ առիթ կ'ունենայ յետահայեաց, համապարփակ ակնարկով աչքի առջև բերել անցեալը, իր բոլոր ուրախ թէ տրտմառիթ յիշատակներով, և հետախոյզ ակնարկ մը նետել ապագայի մթու թեան մէջ: Զպիտի խօսինք մեր հանրային կեանքին վրայ, որուն անցեալը որքան վշտառիթ, ապագան նոյնքան մութ կ'երեւայ դժբախտաբար: Այդ մասին ձեռնհաս աշխատակից մը՝ Յարութիւն էֆ. Մկրտչեան՝ ամփոփ կերպով խօսած է ներկայ թիւին մէջ: Ու թէ և բոլորովին համամաս չըլլանք իր քիչ մը չափազանց յոռետես դատումներուն՝ ի մասին հայ եկեղեցականութեան, բայց իր գծած պատկերը քստամոնային ճշգրիտ կը գտնենք մեր ազգային-եկեղեցական գործերու մասին: Զերմապէս կը մաղթենք որ նոր սկսող տարին իրեն հետ բերէ հոգեւոր կատարեալ զարթնում մը հայ եկեղեցականութեան մէջ, կատարեալ գիտակցութիւն իր պարտականութեանց և իրաւանց, և երկու նորընտիր Հոգեւոր Պատերժ. Տ. Տ. Կէորգ Ե. Կաթողիկոս և Տ. Յովհ. Ս. Արշարունի Պատրիարք՝ աստուածային օրհնութեամբ և զիրենք չընկալատող եկեղց. և աշխարհական գործիչներու անձնուէր ջանքերով և օժանդակութեամբ ի վիճակի գտնուին բազմացում սէրն ու համերաշխութիւնը վերահաստատելու ազգին մէջ, (*) և համա-

խորհուրդ գործակցութեամբ աշխատին մեր թշուառ ազգին վերականգնումին: Զերմապէս կը բաղձանք նաև՝ Ս. Երուսաղէմի Պատրիարքական աթոռին վրայ բարձրացած տեսնել արժանաւոր եկեղեցական մը, այդ պատմական վանքին մէջ վերահաստատելու համար ճշմարիտ միաբանութիւն մը:

*** Բայց տարեմուտը որքան հանրառային, նոյնքան և աւելի՝ անհատական կեանքի մէջ ունի իր մեծ նշանակութիւնը: Անհատը, հաւատացեալ թէ սկեպտիկ, պէտք ունի անդրադառնալու իր կեանքի անցած օրերուն վրայ, գործուած սխալներէն դասեր քաղելու, և կատարուած լաւագոյն գործերուն մղում տալու համար:

Թողլով սկեպտիկը իր աւաւել կամ նուազ մօայլ և յուսահատ տրամադրութիւններուն մէջ, քեզի՝ կ'ուզղեմ խօսքս, հաւատացեալ: Անցեալ կեանքիդ վրայ խորհելու օգտակար սովորութիւնը ունի՞ս արդեօք, վաճառականին պէս որ իր շահն ու ղէնի հաշուեկշիռը կը պատրաստէ: Նիւթական կեանքէն վեր, բարոյական, հոգեկան կեանք մը կայ որուն կը հաւատաս: Այդ բարձր կեանքի պէտքերը զբաղեցուցած են քու միտքդ, ձգտում մը ունեցած ես գտնուած վիճակէդ աւելի վեր բարձրանալու հոգեպէս, բարոյապէս և իմացականապէս, ինչպէս կը ձգտին նիւթական տւեղի ճոխ գիրքի մը հասնելու: Մարդկային կիրքերը, ասեղութիւնը, նախանձը և ուրիշ մոլեկան զրկումներն ու ագեղ սովորութիւնները, որոնց գերին եղած է մարդկութեան ստուարագոյն մասը, քու վրայ ալ գործած են իրենց չարաչուք ազդեցութիւնը:

Ապագան մութ է միշտ նախախնամութեան անհասանելի մէկ տնօրինութեամբ, որ միեւնոյն ատեն մեծ բարիք մ'է մարդկութեան, քանի որ ապագայ դժբախտութեանց կանխաւ գիտակցութիւնը յուսահատութեան պիտի մասնէր զմեզ. բայց վաղուան անստուգութեան խաւարին մէջ աւաջնորդուելու և շիտակ ճամբէն քայլելու համար, ունի՞ս արտիդ մէջ ճշմարիտ լոյսը, հաւատքի՞ լոյսը:

(*) Դադարաւորներու այս կարգին անկարելի է չընշտել Ս. Էջմիածնի և Սիսի Կաթող. Աթոռներուն միջև դարերէ ի վեր առկա մնացած խնդիրն կամ խտրելի բարձման պէտքը: Հարկ է որ միանգամ ընդ միշտ ճշգրտին երկու հայրապետական Աթոռներու և անոնց միաբաններու յարաբերութիւնները, պարտքերուն և իրաւունքի սահմանը:

Ան է որ ուժ պիտի տայ քեզի՝ բարձրագլուխ յառաջանալու կեանքի գծնդակ ուղեւորութեան մէջ։ Ան ներքին հզօր ազդակ մըն է, որ ամէնէն սկար հոգիներու մէջ կը դնէ անպարտելի նկարագիր մը, անընկճելի կամք մը՝ կեանքի բոլոր դժբախտութիւններուն մէջ, և կորով ու տուկունութիւն՝ յարատեւ և աննուաճ ջանքերով խորտակելու ամէնէն անյայթելի պատուարները։ Ան է որ հաստատուն յայտի ճառագայթը կը վառէ սրտիդ խորը, և քրիստոնէական գերագոյն առաքինութեան՝ աստուածային սիրոյ հետ միացած, կը ցուցնէ քեզի թէ ինչ ուղղութեամբ պիտի կատարես քու պարտքերդ, սիրանալու համար քու իրաւունքներդ։

Հաւատացեալ։

Դիտէ՛ անցեալը, քու կեանքդ, քեզ չըջապատողներուն կեանքը, քու ազգի՛դ կեանքը։

Եւ պիտի տեսնես թէ քու բոլոր դժբախտութիւններդ սկզբնապատճառը՝ հաւատքի պակասը, ներքին զօրաւոր համոզման մը չգոյութիւնը եղած է։ Եթէ ընտանեկան կամ՝ անհատական վիշտերու տակ ընկճուած ես, պատճառն այն է որ գերագոյն սիրտիդ չես կրցած գտնել կրօնքին մէջ, որուն վրայ ունեցած հաւատքդ թերի եղած է։ Եթէ ու ե աշխարհային գործի մէջ չես յաջողած, շարժառիթն այն է որ պակասած է քեզի համոզումը, հաւատքը, թէ դու եւ այդ գործին տեսնես, դու եւ այդ գործը կրնաս գրախ հանել։ Եւ հակառակը՝ ուր որ այդ զօրաւոր հաւատքը գոյութիւն ունեցած է, յաջողութիւնը, երջանկութիւնը բոլոր գրած են միշտ։

Դիտէ՛ քեզ չըջապատողներուն կեանքը, և նոյն երեւոյթը պիտի տեսնես։

Դիտէ՛, ի նկատ ա՛ն ազգիդ դարաւոր կեանքն ալ, և պիտի համոզուիս թէ աւրիւնոտ դարաշրջաններու մէջէն՝ թէեւ կրճատուած, թէեւ յօշոտուած, ջարդուած, բայց բարձրագլուխ դուրս եկած է ան, լոկ իր անուղայլ հաւատքին չորհիւ, հաւատք իր Աստուծոյն և Եկեղեցիին ձրայ, հաւատք իր ներքին բարեցական ուժին

վրայ, իր իմացականութեան վրայ, իր չարքաշ աշխատասիրութեան վրայ, իր ասարելու իրաւունքին վրայ, Արդարութեան վրայ։

Ամանորի ընտանեկան պարկեշտ համախմբումներու և զուարճութեանց միջոցին, ջերմ շնորհաւորութեանց և բարեմաղթութիւններու մէջտեղ անգամ, անդրադարձի՛ր այս ճշմարտութեան վրայ, և այն ասին աւելի մեծ պիտի ըլլայ քու վստահութիւնդ, աւելի՛ անխառն՝ քու երջանկութիւնդ։

Այս վստահութեամբ և հաստատ համոզումով, մենք ալ ջերմ շնորհաւորութիւններ կ'ուղղենք մեր հեռաւոր և մերձաւոր բոլոր ընթերցողներուն և բարեկամներուն։

Շնորհաւոր նոր տարի։

ԶԱՐՄԱՅՐ ՔՍԶԱՆԱՅ

1912Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յառաջիկայ 1912 տարին Հայ ցեղին քաղաքակրթական կեանքին մէջ նշանաւոր հանգրուան մը ըլլալու կոչուած է։

1912ին կը լրանայ Հայ տաղգրութեան սկզբնաւորութեան չորհարկաբանակը, և անդրանիկ Հայ ընկերութեան՝ Արշարունակայ ընկերութեան գործունէութեան հարկաբանակը։

Բացասորեւ նշանակութիւնը Հայ տաղգրութեան, և հաւաքական գործունէութեան այն ձեւաբաններուն, որոնք ընկերութիւններու ձեւքով կրնան կատարուիլ, աւելորդ աշխատութիւն մը պիտի ըլլար։

Վերջին չորս հարիւր տարիներուն մէջ, իբր ազգ Հայ ցեղին ինքնապահութեան ամէնէն զլխաւոր — չըսելու համար միակ — ազգակը եղած է մամուլը, որ օժանդակած է Հայուն Հայ միալուս, պաշտպանելով Հայուն կրօնը օտար քոթականքին դէմ, վերականգնանայնելով Հայ լեզուն՝ հակառակ միջավայրի ճնշումներուն, սերմանելով ազգութեան, կրօնի, բարոյականի, դիտութեան գաղափարները, և

հաղորդակցութեան դնելով հայ միտքը օտար ազգերու մատուր ու քողաքակրթական շարժման:

Այսքան հսկայ նշանակութիւն մը ունեցող գործի մը գոյութիւն առնելուն չորս հարիւրամեակը կը յսնայ այստարի, և ինչպէս միշտ՝ այդ տեսակ պարագաներուն՝ գիտեն արժանաւորապէս սօնել, Ռուսահայք հիմակուրնէ կը պատրաստուին այս նշանաւոր հանգրուանը պոնծացնելու, մինչ թրքահայոց մէջ ու է շարժում գոյութիւն չունի մինչեւ հիմա, և շատ հաւանական ալ չէ որ ասկէ յետոյ ձեռնարկ ըլլայ, եթէ գործին գլուխ կանգնողներ չգտնուին: Այսքան թեւաբոլ գործի մը՝ փափաքելի էր որ ազգը իր ամբողջութեամբ գլուխ կանգնէր, և չթողուր որ անհատներ ձեռնարկ ընէին և անոր մատուար հոնգամանք մը տային: Սակայն պիտի կարելի ըլլայ՝ ասիկայ չենք յուսար, մանաւանդ թրքահայերէն, որոնք անգործութեան մասնուած մարմին մը կը ներկայացնեն: Ռուսահայք այդ նախաձեռնութիւնը ունեցան, գէթ գրական շրջանակին մէջ անդրադառնալով այս յիշատակը մնայուն Հաստատութեամբ մը կամ կազմակերպութեամբ մը յաւերժացնելու պէտքին վրայ:

Ազգին ամէն անհատներուն համար հաւատարմ նշանակութիւն մը ունեցող տրպագրութեան շորհարիւրամեակը փափաքելի էր որ ածնուէր աշխարհի ամէն կողմը ցրուած ու տարածուած Հայերէն միեւնոյն օրը, և կեդրոնի մը մէջ հիմնուէր այս յիշատակը յաւերժացնող Հաստատութիւն մը:

Ասիկայ գեղեցիկ տւիթ մը պիտի ըլլար նաեւ հաղորդակցութեան և յարաբերութեան մէջ դնելու Ռուսահայ և թրքահայ մտաւորականները, գործի ու աւելատուրի մարդիկը, արհեստաւորները, հանրային գործիչները, կրօնաւորները, մէկ խօսքով ամէն դասակարգի պատկանող անձերը, որոնք հաւատարապէս և անխնայօք օգտուած են հայ տպագրութենէն:

Իւրաքանչիւր հայ, միակ դիրք մը կարողացողը, լրագրի պարզ ընթերցող մը, տպագիր քերականի մը երեսը միայն տես-

նողը, նոյնիսկ այն որ կարդայ գրիչ չէ սորված, սակայն մամուլէն օգտուած է անուղղակի կերպով, կամ ազգային տեսակէտով, Հայ եկեղեցւոյ մէջ հայերէն ժամերգութիւն, Հայ առնետուն մէջ Հայ լեզուն լսելով, իբր իր ազգային գոյութեան հարցին աննման սիւնն ու պաշտպանը, բան մը կը պարտի հայ տպագրական մամուլին, և անոր առաջին գործիչին, «մեզ պատրտ Յակոբ»ին, աննշմար և անձանօթ մնացած Հայուն, որ իր ժամանակներու մատուր մեծ կեդրոնին՝ Վենետիկի մէջ առաջին անգամ հայ տաւերով հայերէն գիրք տպագրեց:

Անտարբերութիւն մը, այս պարագային, բացարձակ ապերախտութիւն մը պիտի ըլլայ և մեղապարտ ու դատաւարանի անզգայութիւն մը:

Հետեւաբար, 1912ին սեմին վրայ պէտք է որ միջոցներ ձեռք առնուին, այդ ապերախտութեան նախապինքէն դերձ մը նսրու համար:

*
*

Այս մեծ յոյեղանին պէտք է կցուի նաեւ անդրանիկ ընկերութեան հարիւրամեակը: Անցեալ դարու հանրային գործունէութեան և մտաւորական ձեռնարկներուն վուգորդուած պիտի տեսնէք միշտ ընկերութիւններ, որոնք զանազան գաղափարներու ռահվիրաները հանդիսացած են ազգին մէջ:

Եւ հիմա, դեռ ազգին մէջ անոնք իրենց քողաքական ծրագրովը կամ մարդաբան և կրթական նպատակներովը նշանակելի դեր մը կը կատարեն, և գէթ անոնց վրայ պարտք կը ծանրանայ իրենց անդրանիկ ընկերոջը հաստատութեան հաջիւրամեակը ածնելու համար հանդէսով մը, եթէ փառաւորը կատարելու անձեռնհաս են:

Եւ պէտք է նկատել թէ տպագրութեան առաջին ձեռնարկն ու ընկերութեանց անդրանիկը, շատ մը կապերով իրարու կը վուգորդուին, և նոյնիսկ կարելի է երկուքը միասին տօնել:

Արշարունհայ ընկերութիւնը, կազմուած

Տիւզեան նախաձեռնութեամբ՝ արեւմտեան զարգացում ունեցող անձերէ, պէտք է դիտել թէ հրատարակչական ընկերութիւն մըն էր, հետեւաբար տպագրութեան գործին հետ ուղղակի կապուած գործ մը:

Դարձեալ շատ նշանակելի է թէ հակառակ անոր որ Կ. Պոլսոյ մէջ կազմուած էր, իր գործունէութեան ազատ ասպարէզ կը գտնէր Վենետիկ, հոն ուր առաջին հայ դիրքը տպուած է: Արշարունեաց ընկերութիւնը նպաստած է Վենետիկի մէջ հրատարակուած Դիսսկ Բիզանդեան Հանդէսին հրատարակութեան, և նկատած է արեւմտեան միտքը ու գաղափարները տարածելու արեւելեան խաւար միջավայրին մէջ, ինչպէս երբեմն «մեղսպարտ Յակոբ» մտածած էր և գործադրելու աշխատած, երեք հարիւր տարի առաջ:

Հետեւաբար շատ պատշաճօրէն կրնան միացուիլ այս երկու յիշատակները:

ԱՐՇԱԿ Ա. ԱՊՅԱՃԵԱՆ

ՀԱՅ-ՀՈՒՄԷԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Հայ-հումէականներու «երկնառաք» Կ. Պատրիարքը վերջապէս դարձաւ Հոռմէն, իր հետ բերելով Պապին զօրոյնները՝ ուղղեալ իր համախոհ Գերապայծառներուն: Թէրզեան այնպէս կը կարծէր և կամ, Գոյունեանի խօսքերէն համոզուած, անանկ կ'երազէր որ Հայ-հումէական ժողովուրդը գլուխը բանալով պիտի ծնրադրէր իր Պատրիարքին առջև, կլկու համար կանխաւ պատրաստուած դեղահատները:

Որքան ցաւալի և դատապարտելի են Թէրզեանի այս հակաժողովրդական արարքները, նոյնքան և աւելի դատապարտելի է Թէրզեանը չընկալատող Հայ-հումէական եկեղեցականներու բռնած ընթացքը: Թէրզեան երբեք չէր կրնար մտածել թէ իր դէմ կայ ժողովուրդի մը զայրոյթը՝ որ մէկ անգամէն կրնար ջախջախել իր հակասահմանադրական և միապետական ըմբռնումն ու քանաճոյքները: Եւ ասանկ ալ եղաւ: Թէրզեան Պոլիս մտաւ, զինքը զիտուորել եկած էին իրեն համախոհ մէկ

քանի եկեղեցականներ՝ որոնք ուղղակի Սագըզ-Աղաճիկ Պատրիարքարանը առաջնորդեցին անկեալ Պատրիարքը: Ժողովուրդը՝ փոխանակ ընդ առաջ երթալով՝ խոնուած էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ դրան առջև՝ ուսկից պիտի մանէր «աստուածատուր» Կ. Պատրիարքը:

Կառքը երեւցածին պէս իր պարտականութեան գիտակից ժողովուրդը, զսպանակէ մը մղուածի պէս, միահամուռ կը պօռար «անկցի Թէրզեան, չենք ուզեր, ներս պիտի չմտնես»:

Մեծ էր ժողովուրդին զգացած զայրոյթը և այնքան սաստիկ՝ որ մէկ քանին իր կառքին վրայ յարձակելով թքին Կ. Պատրիարքին երեսին, և նոյն իսկ անոր մօտ քէն բռնելով կառքէն դուրս հանել կը ջանային: Թէրզեան ալ իր կարգին յայտնապէս յուզուած էր ժողովրդական այս բռն ցոյցին իր վրայ ազդած սոգաւորութենէն:

Նուաղելու յիշակին հասած էր, երբ հազիւ կարելի եղաւ իր համախոհներու միջոցաւ բռնի ներս մտցնել զինքը:

Դուռները գոցուեցան և սակայն ժողովուրդը կը շարունակէր պօռալ. «Դուրս, դուրս, անկցի Թէրզեան»:

Թէրզեան, անկեալ Պատրիարքը, ժողովուրդին այս բռն և ուշադրաւ ցոյցին ու կամքին առջև խոնարհելով իր հրաժարականը տալու տեղ, յաջորդ օրն իսկ Ոստիկանութեան և Արդարութեան գործոց նախարարին կը դիմէր, բռնի ոյժ գործածել տալու համար զինքը դատապարտող ժողովուրդին հանդէպ:

Երեսփ. ժողովը որ նախապէս, ժողովուրդին կամքին համաձայն, պաշտօնանկ հռչակած էր Թէրզեանը, իր մէջէն պատգամաւորութիւն մը ընտրելով Կ. Պատրիարքին դրկից հրամարականը պահանջելու համար:

Այս միջոցին դարձեալ ժողովուրդը խոնուած էր Պատրիարքարանի առջև և շուտօրոյթ անօրինութիւն մը կը պահանջէր երեսփոխանութենէն: Չմոռնանք ըսել թէ Թէրզեան չթոյլատրեց որ երեսփոխանութիւնը գումարուի Պատրիարքարանի

մէջ, վասնզի ըստ ինք լուծած է Երեսփոխանութիւնը և ատանկ ժողովի մը գոյութիւնը չի կրնար ճանչնալ: Պատգամաւորութիւնը չափ ղեկարարութեամբ կրցաւ մտնել Կ. Պատրիարքին քով: Ատենապետ Երամեան էֆ. ժողովուրդին կամքին իբր թարգման: Պատրիարքին հրաժարկանը պահանջեց: Թէրզեան ըստ թէ, ինք «ժողովուրդէն ընտրուած չէ, իր Պատրիարքութիւնը երկնատուր, երկնապարգեւ է և հետեւաբար չի կրնար ապ իր հրաժարկանը»: Պատգամաւորութիւնը ի գուր համոզել կը ջանար «Երկնապար» Պատրիարքը, որ անդրդուելի կը մնար: Դուրսը խոնուած ժողովուրդը լսելով այս խօսքերը, Պատրիարքարանի Դրան վրայ խուժելով դուռները կոտորել փորձելու պահուն, կանխաւ եղած պատրաստութեան մը համաձայն, և գաղտնի ոստիկանի մը առաջին սուլումին վրայ 40—50 ժանտարմաներ հանելով ժողովուրդին հրամայեցին ցրուիլ:

Այս միջոցին վերաւորուեցան մէկ քանի երիտասարդներ որոնցմէ մին նուազեցաւ: Թէրզեան կը պնդէր թէ Պատրիարքարանը իր «իգամէթիւեան»ը, բնակարանն է. և ըստ որում բնակարաններն անընդարարելի են, հետեւաբար կառավարութենէն կը պահանջէր օրէնքին գործադրութիւնը: Ահա Թէրզեանի ոգորմելի վերջին մէկ փորձն ալ, որ իրեն դատաւնիքը պիտի ըլլայ:

Շատ ճիշդ է ուրեմն Տօք. Զօհրապ էֆ. ի ճիւղացիքի, որ մայրին հիւանդութիւն կը տեսնէր Թէրզեանի վրայ:

Եւ իրաւ ալ, մարդ յիմար ըլլալու է որ, քաններորդ դարու մէջ ինքզինքը երկնապար Պատրիարք մը դառնի, Պատրիարքարան մը՝ Ազգին համար չինուած տեղ մըն ալ իրեն «իգամէթիւեան» նկատէ:

Տեսնենք թէ ինչպէս պիտի վերջանայ Հայ-հռոմէական այս տագնապը, և թէ կառավարութիւնը ինչ ընթացք պիտի բռնէ Թէրզեանի հանդէպ՝ որ անշուշտ իր կռնակը Հռոմին տուած, իրեն համախոհներուն հետ պիտի դիմագրաւէ ստակաւին:

ԱԲԵՂԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՔԻ. իր անուան ածնախմբութեան առթիւ, ԵՂ. օր ընդունեց պաշտօնական և անպաշտօն, եկեղ. և աշխարհական բողոքութիւն անձնաւորութեանց շնորհաւորութիւնները: Նոյն օրը Պատրիարքարան փոխադարձ այցելութեան եկաւ Յունաց Տ. Եօաքիմ Պատրիարքը, ընկերակցութեամբ երեք մետրապոլիտներու և խառն ժողովոյ աշխարհական անդամաց, և պատշաճ մեծարանօք ընդունուեցաւ: Տ. Եօաքիմ Պատրիարք կրկնեց իր շնորհաւորութիւնները, և սիրալիր խօսքեր փոխանակուեցան: Թարգմանի պաշտօնը կը կատարէր Եօաքիմ սակաւագ: Նոյն օր այցելեց նաև Պուլկարաց Եկզարքի փոխանորդը:

* * * Ռուս դեսպանը ԵՂ. օր այցելեց Ս. Պատրիարք հօր:

Ա.Զ.Գ. ԺՈՂՈՎԻՆ անցեալ ուրբաթի նիստին մէջ, որ օրինական մեծամասնութիւն չէր կրցած ունենալ, կարգադրուեցաւ Օրմանեան Ս. ի խնդրոյն մասին Աստուծոյ պետաց Դիւանի տեղեկագիրը, որուն վրայ կը գրենք քիչ մը վարը, և օրակարգ անցուցեալ խնդիրը: Ժողովը համաձայն գտնուեցաւ. Նախաձեռնութեան Դիւանին, որ Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան մասին իր մատուցած տեղեկագրով՝ սկզբամբ ընդունելով հանդերձ այդ վերաքննութեան պէ՛տ, Կ'ըսէ թէ «Ազգին ներկայ տագնապալից վիճակին մէջ, երբ կենաց, ընչից և պատուոյ ապահովութեան խնդիրը կը յուզուի աւելի քան երբեք, և երբ ազգն ստիպողական դիմումներ կատարելու հարկին մէջ է կառավարութեան մօտ, անդէպ է խնդրամատուց ըլլալ Ազգ. Սահմանադրութեան նոյն իսկ մասնակի վերաքննութեան համար, երբ արդէն ազգերու ներքին կազմակերպութեան և Պատրիարքարանի առանձնաշնորհմանց մասին գոյութիւն ունեցող արամադրութիւններն յայտնապէս աննպաստ են:»—Յետոյ ժողովը երկար վիճարանութիւն մ'ունեցաւ նպատեղեկալ ուսանողներու խնդրոյն մասին, անոնց կողմէ ուղղուած նամակի մը առթիւ, որով կը պարզէին իրենց արդահատելի կացութիւնը: Վարչութեան և Տնտես. Խորհրդոյ առանապետները բացատրութիւններ տուին մինչև հիմայ եղած կարգադրութեանց մասին, և բուն վի-

ճաբանութիւններէ հաքը, որու միջոցին կարօտ ուսանողաց՝ ազգին տպագայ յայտերուն՝ օգնելու ստիպողական պէտքը շեշտուեցաւ արդարապէս, Օննիկ էֆ. Չայկան առաջարկեց որ Երեսփոխանութիւնն ինք առաջին օրինակը տայ՝ մէյմէկ գումար արձանագրուելով, հետեարար հանգանակութիւն խոցօրի անմիջապէս: Այս գործնական առաջարկն անհետեանք մնաց, և հետեապէս ուսանողաց ջերմ պաշտպաններուն խօսքերը՝ ըստ մեծի մասին պոռտախօսութիւն ըլլալն հաստատուեցաւ դժբախտաբար: Ժողովը՝ սակայն՝ չորհաւորելի հոգածութեամբ մը, միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձեւը, զոր ստորագրած էին Գ. Զորբայ, Հ. Խօճասարեան և Պ. Բարազեան էֆ. ներք. —

«Ազգ. Ժողովը գոհութեամբ լսեց Ազգէն օժանդակութիւն ստացող ուսանողներուն՝ իրենց կրթական շրջաններուն մինչեւ աւարտումը, հարկ եղած օգնութիւնը շարունակելու մասին վարչութեան կողմէ տրուած խոստումը: Ազգ. Ժողովը մեր ազգին կրթական տպագային համար կենսական եղող այս դործին տեւական հանգամանք մը տարու համար, կը յանձնարարէ ստիպողաբար պատրաստել և Ժողովիս բերել կանոնադրի ծրագիր մը, ճշտելով անոր մէջ օգնութիւն ստանալիք ուսանողներուն թիւը, տարիքի, վիճակի և կըրթական աստիճանի պայմանները, օգնութեան ձեւը և տեւողութիւնը, և ուրիշ հարկ եղած ամէն մանրամասնութիւնները, ինչպէս նաև անոր տարեկան պիտոճէն և դործողութեան միջոցները, մինչև ցարդ եղած գործառնութեանց տեղեկագրին հետ»:

Ժողովը՝ միեւնոյն ատեն՝ որոշեց, իբր տարբեր առաջարկ մը, ուրիշ նիստի մը մէջ ի նկատ առնել Գեղամ էֆ. ի բանաձեւը, որ կ'առաջարկէր «Հայաստանի կառուար կեդրոններուն մէջ միջնակարգ դըպրոցներ բանալ, որպէս զի երկրորդական կրթութիւն առնելու համար հոս չգտն. իսկ այս տարիչըջանին, բացառաբար, մինչև յունիս, բաց ի որոշուած 110 ուսանողներէն, հոգալ նաև գուրսը մնացած 30—40 ուսանողները»:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԷ Կիր. օր ի նկատ առաւ տեղեկագիրը այն նախարարական Յանձնաժողովին, որ Հայ երեսփոխաններու մատուցած յիշատակագրին վրայ պատրաստուած էր: Այդ տեղեկագիրը

մեծ մասամբ կ'ընդունի հայ երեսփոխանաց առաջարկները՝ անդորրութեան պահպանման համար: Վերջնական որոշումը վերապահուած է վարչապետ Ստիտ փաշայի ներկայ գտնուած մէկ նիստին:

Ներքին գործոց հրամարեալ նախարար Ըէլալ պէյ շարժուա Ս. Պատրիարք Հօր առեւած այցելութեան միջոցին հաւատարմ է թէ Ստիտ փաշա ըմբռնած է այդ գործարքի բարենորոգմանց պէտքը, և խնդիրը պէտք եղած կարեւորութեամբ նկատի առած է: Բարենորոգմանց իրրեւ միջոց, խորհուած է ստիտեան-զինուորներութիւն աւելցնել, և պաշտօնէութեան կազմակերպութիւնը կատարել:

Պատերազմական նախարար Եէվլէթ փաշա ևս Բշ. օր Ս. Պատրիարք Հօր այցելեց, և Ն. Սրբազնութեան կողմէ գաւառներու անապահով վիճակը պարզուելով, նախարարը հաւատարմ է կարելի ամէն միջոց ի գործ ախտի գրուի այս մասին, և թէ Դանիճն իր գլխաւոր պարտաւ կանուլութիւններէն մէկը կը նկատէ այդ ինդիրը:

ՆՈՐԸՆՏԻՐ Կաթողիկոս Տ. Դէորդ Ե. Սրբազան փոխադարձ հեռագրով չորհակալութիւն յայտնած է Պատրիարքարանին և Թրքահայոց իր մասին ցոյց տուած համակրանքին համար:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ. — Ս. Պատրիարքը Կիր. օր փոխադարձ այցելութեան գնաց Հայ-հռոմէականաց Ընդհ. Ժողովոյ ատենապետ Երամ էֆ. ի և Վարչ. Ժողովոյ անդամ Ա. Կէօչէօղլու էֆ. ի բնակարանները, և սիրալիր ընդունելութիւն գտաւ:

* Հրէից Բարունապետը Բշ. օր այցելեց Ս. Պատրիարք Հօր:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿՈՆ ընտրութեան համար Ս. Էջմիածին գացող պատգամաւորները Պոլիս դարձան անցեալ և այս շարժու: Ընտրութենէն առաջ պայքարը շատ բուռն եղած է թէեւ, և եկեղիւնի դարձեր են ոչ պատուաբեր կերպով, բայց արդիւնքին համար գոհօրհակութիւն կը յայտնեն պատգամաւորները, և կ'աւելցնեն թէ Պոլիսէն կամ ո և է տեղէ մը հայրապետական Աթոռը զրկուած եպիսկոպոս մը

չառ գծուարութեանց պիտի բաղկեր գուցէ, մինչ Սուրէնեան Ս. տարիներէ ի վեր ստորած ըլլալով էջմիածնի միջոցաւ մէջ, աւելի դիւրութեամբ պիտի կրնայ վարել գործերը, և բնականէն խաղաղասէր և հաշտարար՝ օգտակար ընծայել իր կաթողիկոսական պաշտօնը: Շատ արուեստագետութիւն թողուցեր է ընտրութեան տուփէն ելած թուղթ մը, որուն վրայ գրուած է եղեր թէ «Խուրեան Ս. Դաշնակցականներուն ընտելիւն է»: Պրօկուրօրն այդ թուղթն առնելով տեղեկագրին կցեր է: — Պատգամաւորներէ մէկ մասն Անի այցելելով աւերակներն աչքէ անցուցեր է: Եկեղց. Պատգամաւորներէն Մայր Եկեղեցւոյ աւագերէց Տ. Տրդատ քհն. հանգիստաւորապէս պատարագեր է հայ թագաւորներու օժուած եկեղեցիին մէջ: Տ. Տրդատ քհն. իրեն հետ Ս. Միւսնոն բերած է էջմիածնէն:

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐԻ առաջնորդ ընտրուած է առաջն. տեղապահ Տ. Վաղինակ Վ.: ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ առաջնորդ Տ. Զաւէն Եպ. անձնական պատճառներով հրաժարեր է առաջնորդութենէ:

ՕՐՄԱՆԵԱՆ Ս. ի դէմ եղած ամբաստանութեանց քննիչ յանձնաժողովին տեղեկագիրը քննուած է Ատենապետաց Դիւանին կողմէ, որ Ազգ. Ժողովին մատուցած տեղեկագրին մէջ կը հաստատէ թէ քննութիւնը գրէթէ բոլոր կէտերու մէջ օրինաւորութեամբ կատարուած է: Իսկ Վաւմիան էֆ. ի ամբաստանութեան նախաքննութիւնն ալ կատարելով, լսելէ ետքը թէ՛ Օրմանեան Ս. և թէ՛ Վաւմիան էֆ. ն, տեսեր է որ չկայ ու է փաստ՝ հաստատող ծանօթ ամբաստանութիւնը, ուստի անհետեւանք թողուցեր է Վաւմիան էֆ. ի ամբաստանութիւնը: Գալով Լա Հէյի հեռագրի խնդրոյն, Ատենապետաց Դիւանը իր տեղեկագրին մէջ յառաջ կը բերէ Դ. Նորատունկեան էֆ. ի այդ մասին իրենց ուղղած մէկ նամակը, որով Ն. Վաւմութիւնը կը պատմէ թէ Արհեստանոց-Գարակէօղիան ինամակաւորութեան մէկ նիստին մէջ, որուն ներկայ էին Պատրիկ Կիւլպէնկեան, Մկ. Ասատեան, Սեպուհ Տէ-

միրճիպաշեան էֆ. ք, Օրմանեան Ս. պարզած ըլլալով որուն վիճակին ծանրութիւնը և արքունիքէն կրկին և կրկին եղած ստիպողական պահանջը՝ Լա Հէյի խաղաղասիրական վեհաժողովին առթիւ, ներկաները կարծիք յայտնած են թէ այդ պահանջման ձեւակերպական գոհացում տալով ազգը բնաւ մնաս չի երեր: Այս առթիւ Ս. Տէմիրճիպաշեան էֆ. իրաւամբ դիտել տուեր է թէ ընդհակառակն հեռագրին օգուտ իսկ կ'ունենայ, հալածանաց մասամբ առջիւր կ'առնու, փոխանակ արժարժուելուն, սնտեղի կասկածներու հետեւանք: Գալով 1907ի Լա Հէյի Բ. Վեհաժողովին, Նորատունկեան էֆ. կը հաւաստէ թէ ու է հեռագիր արուած չէ Պատրիարքարանէն:

ՊԱՂՏԱՏԷՆ Պատրիարքարան հասած պաշտօնական նամակներէ գոհութեամբ կը տեղեկանանք թէ բացարձակապէս անհիմն է Սառա Աղեքսանդրեան անուն մեծահարուստ հայ ազգական մը տակէ առաջ ուղղած դանդաղ թէ Պաղտատի Պատր. փոխանորդ Տ. Մովսէս Եպ. Կեօմարիկեան իր թէ բռնի ստորագրութիւն առած է իրմէ և իր իրաւունքներուն դէմ գործած է: Այդպիսի անհաւատարմ յուրի մը չէինք ուղղած արձագանգ ըլլայ ժամանակին, և իրողութիւնը իրաւունք կուտայ մեզ: Տեղւոյն պաշտօնական մարմինները կը հաստատեն թէ այդ աղջիկը որ չուայ կեանք մը կը վարէ և իր ազգականներէն հեռացած է, այժմ Պոմպէյ փախցուած է Կարմիւսեան Կաթողիկ մայրապետներու միջոցաւ, և անոնց գրգռմով կ'գործէ ընդդէմ Տ. Մովսէս Եպ. ի, որուն դերը եղած է միայն վարած չուայ կեանքէն հրաժարելու յորդորել, և միւս կողմէ անոր հնգ. հօր կողմէ ազգին վնասք եղած կայունաներու ազգային իրաւունքը պաշտպանել:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ընկերութիւնը վաղը, կիրակի, յունվար 1, 1912, կէս օրէն ետքը ժամը 1ին (Ը. Ե) ամանորի առթիւ գեղեցիկ հանդէս մը սարքած է Գում-գափու Հիսար տիպի վարժարանին մէջ: Շնորհաւորելի յարատեւութեամբ մը Դպրոցատէր տիկինները յառաջ կը տանին իրենց այնքան օգտակար գործը, որ ամէն քաջակերութեան արժանի է կրթատէր ազգայիններու կողմէ:

ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅԱՌԻԿ ՆՈՒԷՐՆԵՐ՝ ՄԵՐ ՊԱՏ. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Հրատարակելու առթիւ Տաճարի Բ. շրջանի վերջին միացեալ թիւը, որով՝ նախապէս աւելի տուած ութ էջով՝ հասուցած կ'ըլլանք 52 թիւի մեր ամբողջ պարտքը. հարկ կը զգանք ծանուցանելու թէ մօտաւոր թիւով մը՝ անջատ թերթով իբրեւ յաւելուած պիտի տանք Տաճարի ներկայ տարւոյ նիւթերու ցանկը. կը յուսանք նաեւ տալ նախորդ Ա. շրջանի ցանկը:

Երրորդ շրջանի Ա. թիւը կը հրատարակուի Յունիար 5ի Եշ. օրը, Ս. Մանդեան աօնի պատշաճ բովանդակութեամբ: Այլ թիւով կը սկսինք գործադրել մեր խոստումը, շարաթական ութ էջ հայատառ-թուրքերէն յաւելուած մը տալով. կրօնաբարոյական և ազգային շահեկան նիւթերով:

Միւս կողմէ՝ ուրախութիւնն ունինք մեր ընթերցողներուն աւետելու թէ՝ քաջաւերելու համար այս կարգի գերազանցօրէն օգտակար թերթի մը ծաւալումը, որոշած ենք թացառիկ նուէր մը ընել այն բոլոր նոր բաժանորդներուն, որոնք իրենց ապրանքներն հետ կը զրկեն նաեւ տարեկան բաժնեգէնը՝ 40 դրշ. կամ 10 ֆր.: Ասոնք իրաւունք պիտի ունենան՝ միայն թղթատարական ծախքի համար յաւելուածական 40 փարա զրկելով՝ ստանալ հետեւեալ ցուցակին մէջէն այն գիրքը զոր իրենք կ'ընտրեն և մեզ կ'իմացնեն: Նոյն իրաւունքը ունին բոլոր հին բաժանորդներն ալ, որ 1912 տարւոյն համար կը նորոգեն իրենց բաժանորդագրութիւնը, անմիջապէս մաքրելով իրենց հին թէ նոր հաշիւները:

Այս կարգադրութիւնը մեկ ամսուան հաւասար է միայն. որով ետքը պիտի դադրի գործադրուելէ: Կը հրաւիրենք մեր ընթերցողները՝ օգտուիլ ներկայացած նպաստաւոր առիթէն:

Ահաւասիկ ցուցակն այն գիրքերուն, որոնց մէջէն մէկ հաւան ընտրութիւնը պէտք է ընէ ընթերցողը.

Գեր. ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆԻ

» » » »
» » » »

Պարզ ֆարգներ

Միջոցառման Խորհուրդը

Չորս Աւետարաններու ծագումն ու վաւերականութիւնը

Գեր. Տ ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԱՐՍԼԱՆԵԱՆԻ

ՄԵՍՐՈՊ ԷՖ. ՆՈՒՊԱՐԵԱՆԻ

ԳՐԻԳՈՐ ԷՖ. ԿԱԼՈՒՍՏԵԱՆԻ

» » » »
» » » »

Հովուի խօսքեր

Նուպար փաշայի կենսագրութիւնը

Սրբազան ներշնչումներ (Քերթուածներ)

Գեքսեմալի (կրօն. բանաստեղծութիւններ)

Հրապարակաւ գաւթեղերի (Հայատառ-թուրքերէն կրօն. բանաստեղծութիւններ)

Այիւնի Խօսքի պիտիւր (Հայատառ-թուրքերէն) Նեվալըլէրմենեան (Տարեցոյց 1912 տարւոյ)

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՖ. ԳԸՅԸՃԵԱՆԻ

ՅԱԿՈԲ ԷՖ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՀՈՎՈՒԻ ԽՕՍԲԵՐ, ուղղուած քեմական եկեղեցիի ու դպրոցի պաշտօնեաներուն եւ բոլոր Հայ ժողովուրդին. — Ռօտոսթոյի գործաւնեայ և ազգասէր առաջնորդ Գեր. Տ. Գեորգ Ծ. Վ. Արալանեանի այս զգալուն, որջամիտ ու ցնցող խօսքերը կողուած են ճշմարիտ առաջնորդի մը գերը կատարելու օգտակար ըլլալու իղձն ունեցող եկեղեցական և աշխարհական գործիչներուն և բոլոր Հայ ժողովուրդին: Կ'արժէ որ ամէն ոք ունենայ զայն իր գրասեղանին վրայ: Գին 3½ դշ.:

Արտօնատէր

ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ԹԵՈՂԻԿԻ «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ»

Իր անունին տուեցիւ համապատասխան, ամենուն տարեցոյցն է ան, ուր 420 մանրատառ էջերու մէջ խտացած են հայ գեղարուեստագէտներու, գրագէտներու, գիտուններու նորագոյն և լաւագոյն գործերը: Գործը զարգարուած է 200ի չափ պատկերներով: Գրասէրը, գիտութեան սիրահարը և գործի մարդը հաւատարապէս պիտի գտնեն այնտեղ զիրենք չահագորգող նիւթեր՝ տարուէ տարի առաւել ևս ճոխ և կատարելագործեալ պայմաններով հրատարակուող այս գեղեցիկ հատորին մէջ: Գին 12 դրուշ

ՀԱՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՉՈՒՄԱՆ

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

Կեդրոնաժողովի Կ. ՊՈԼԻՍ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՅ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ԴՐԱՄԵՆԵԱԿՆԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ ՀՍՍՏԱՏՈՒՄԸ ԵՆ

ՍԹԱՄՊՈՒԼ, ԳԱԹԸՐՃԸՕԳՂՈՒ ԽԱՆ

Հայկական սոյն դրամական հաստատութիւնը կ'ընէ փոխատուութիւններ՝ առեւտրական տոմսերու, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու և բեռնագիրներու վրայ:

Կուտայ չէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ և հեռագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս Թուրքիոյ, նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը դնէ և կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր և պարտաթուղթեր, թէ՛ մեր և թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս և օտար դրամներ:

Կը դանձէ և կը զեղչէ առեւտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր և կտրօններ:

Կ'ընդունի դրամական աւանդներ նպաստաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Առեւտր. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր հաւնայեփն մեջ փայտեղեղու համար կ'ընդունի

խանութիւն (25) դրոշմն սկսելով գումարներ

Դրամատունս կը կատարէ նաև, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ և թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու և ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում և արտածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական և թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական և ճարտարարուեստական ընկերութիւններ և կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ՄՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՊԱՐՈՆԻԱՆՆԵՐ

ՈՍՏԱՆ, եռանկայ մեծ պարբերագիր.
Հրատարակուեցաւ Ա. տարուոյ չորրորդ
թիւը: Ազգին մէջ լաւագոյն գրողի համ-
բար արդարապէս իւրացնող անձեր՝ Տի-
րան Բեկեկեան, Եր. Սրմաքէշխանեան,
Վահան Թէքեան, Տ. Չրաքեան, Ա.
Իսահակեան ևն. նորավէպերով, քեր-
թուածներով, ուսումնասիրութիւններով
կ'երևան այս լուրջ Հանդէսին մէջ, ուր
ներկայ թիւով կը արուի Օսքար Ուայլսի
Սարմէ ողբերգութիւնը՝ ամբողջովին: Տե-
ղեկութեանց բաժնին մէջ խտացած են հայ
և միջազգային գրական և գեղարուեստա-
կան կեանքի եռամսեայ երևոյթները: Դին
մէկ թիւին 12 դրշ.: Տարեկան բաժնեգին
40 դրշ.: Բացուած է Բ. չրջանի բաժա-
նորդագրութիւնը:

ԱՆԱՀԻՏ, հանդէս Ազգ. գրական, գե-
ղարուեստական, Արշակ Զօպանեանի (Բա-
րիզ): Ստացանք 1911ի յուլիս-օգոստոս
(7—8) միացեալ թիւը, որուն մէջ կը արուի
Ալֆրէտ ար Վինիի հոյակապ մէկ սուամին
(Չեքրըքըն՝ 3 արարուած) ամբողջութիւնը:
Քերթուածներ՝ Ա. Յարութիւնեանէ, Ան-
տիպ Տալեր՝ Սորէն Եպ. Նար պէյի, Մե-
նած Ասուածներուն (քերթուած) Դանիէլ
Վարուժանէ, Բրոնիկ՝ Արշակ Զօպանեանէ
ևն.: Տարեկան բաժնեգին 12 ֆր. Հասցէ
A. Tchobanian, 17 rue La Bruyère,
Paris:

ARMENIA. — Անգլիերէն ամսաթերթ
գրական, ուր կը ցոյանայ հայ գրական և
գեղարուեստական կեանքը՝ իր ամէնէն
պատուաբեր արտայայտութիւններուն մէջ.
ստացանք Դեկտ. թիւը, ուշագրաւ պա-

րունակութեամբ: Անգլիագէտներու համար
ամէնէն շահագրգռական և քաջակրու-
թեան արժանի հրատարակութիւն մը: Խրմ-
բագիր Արշակ Մահսեան: Հասցէ NEW-
YORK, P. O. Box 209, Madison square
station. տարեկան բաժնեգին 1½ տոլար:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ, հայագիտական
ուսումնաբեր. — ստացանք Հոկտ. Նոյ. թի-
միացեալ (10—11) թիւը, լուրջ բովան-
դակութեամբ: Մասնաւորապէս հրատա-
րակուած են Վիեննական միաբանութեան
կրեք յորեկաններու սութիւ ստացած
չնորհաւորականներու պատճէները, ևն,
և նմոյշ մը 100 ամեայ յորեկանին աւթիւ
ի մօտոյ հրատարակելի հոյակապ հատորէն:
Տարեկան բաժնեգին՝ 15 ֆրանք:

ԲԱԶՄԱՎԷՊ, Հանդիսարան ազգային-
բանասիրական, գրական, գիտական: Ստա-
ցանք Հոկտ. թիւը՝ ճոխ բովանդակու-
թեան: Հասցէ՝ Վեննայի, Ս. Ղազար,
նոր չրջանին համար տարեկան բաժնեգին
15 ֆրանք:

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՏԱՐԵՅՈՅՅԻ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Հոյակապ գործ մը, շուրջ 400 ստուար
էջերէ բաղկացած, ուր Տ. Մուշեղ Եպիսկ.
և Ամերիկահայ մտաւորականութիւնը ձեռք
ձեռքի սուած են, ծանօթացնելու համար
Ամերիկահայը՝ իր անցեալի ու ներկայի բո-
լոր փուլերուն մէջ: Պատմական, գրա-
կան, բանաստեղծական գեղեցիկ էջեր:
Դին 1 տոլար, սպ. Պօսթօն, Կիլիկիա
սպարան: Հասցէ՝ Cilicie Press, 795
Washington St. Room, 2 Boston, Mass:

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

ՀՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զամբարան, Յակոբեան Խան

Կ. ՊՈԼԻՍ

